


# ԱՄԻՆ

ԱՄԱՍԳԻՐ

ԿՐՕՆԱԿՄԼ - ԳՐԱԿՄԼ - ԲԱՆԱՍԻՐԱԿՄԼ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱԴԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ



1942

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ  
ԵՐՈՒՍԱԴԵՄ

# Ս Ի Ո Ն

ԺԶ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1942

⇒ ՍԵՊՏԵՄԲԵՐ — ՀՈԿՏԵՄԲԵՐ ⇒

ԹԻԻ 9-10

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ՊՐՈՊԱՏԻԿԵՆ



Մեր նախորդ խմբագրականները զբաղեցան Հայ Սփիւռքի հոգեկան ու մտաւոր կարգ մը ակստանշումներով, հոս կ'ուզենք երեսել անոնց մէկ ուրիշը, աւելի ճիշդ՝ խոտացումը այդ բոլորին: Ատիկա ամուլ սպասման այն տարտամ վիճակն է զոր մենք կը ցուցադրենք մեծ աղէտէն ի վեր: Ստոյգ է որ մեր քաղաքական, ընկերային և հոգեկան բոլոր տենչերն ու ձգտումները ձախողեցան, և այս վիճակը փոխանակ զմեզ զսպանակաւորելու, ինչ որ բնական պարտ էր ըլլալ, խոր և խուլ յուսահատութիւններու առաջնորդեց: — Զիրար մեղադրելու, հարուածելու, և բոլոր հոգեկան և ցեղային արժէքներու նկատմամբ, որոնց շնորհիւ միայն բան մը կ'արժէ այս ժողովուրդը, անտարբեր մնալու այս վիճակը արդիւնք է այս զգացումին: Գերութեան մեր երկար տարիներուն յաճախ փորձուեցան այդ մեծութիւնը կաղմող ոյժերը ջլատել, հոգեկան այդ միութիւնը քայքայել մեր մէջ, սակայն կեանքի բնազդը շատ զօրեղ եղաւ, և անցեալի արիւնոտ փառքին հետ, ապագայի մը երաշխիքը, սև օրերու ողբին ու հեծեծանքին ընդմէջէն անմեռ յոյսը կազմեց զմեզ կանխող սերունդներուն հրեղէն սիւնը, մեզի պարտադրուած անապատներու ընդմէջէն: Մեզ կանխող սերունդները կրնային դեռ հաւատալ թէ վերջապէս արդարութեան զուռները պիտի բացուին մեզի համար ևս, թէ մօտ է աւետեաց երկիրը, զոր ամէն սերունդ կը շինէ իր ճամբուն, ինչ փոյթ թէ անոր սեմին հազիւ հասած յաճախ փակէ իր նայուածքը այդ հեռապատկերին վրայ:

Այդ հաւատքը երկնային ոյժ է եղած մեզի համար, հսկայական կանթեղը զոր միշտ տեսեր են մեր երազուն հայրերը երկինքէն կախ հայրենի բարձունքներուն վրայ: Ահաւոր հարուածները որոնց ենթակայ եղած ենք միշտ, փոխանակ տկարացնելու այդ բնազդը, պայծառ զիտակցութեան վերածեր են զայն: Անոնք որ հեռացած են հայրենիքէն, շատ անգամներ հաց, յոյս եւ լոյս զանելու համար, իրենց հետ տարած են այդ ողբն, անորակելի և անանուն, որ թերևս սէրն էր իր այրուող տան, կործանած տաճարին, հայրենի լեռներուն և դաշտերուն, թաղուած մազադաթներուն, վեր-



ջապէս այն կարօտագին կանչին, զոր հայրենի սէր, հողին ձայն կ'անուանենք: Ասոնք կենդանութեան սերմեր էին տարագիր այդ հայորդիներուն: Այսպէս էին մեր հայրերը դեռ երէկ, իրենց հայրենիքէն դուրս, օտարութեան ջուրերուն մօտ: Իսկ անոնք որ իբրև պահապան կը մնային հայրենի աւերներուն, ամէն առաւօտ լուսաբացին ճեղ մը փայտ կը դնէին օճախին մէջ, որ եթէ կերակուր չէր եփեր, գէթ պապենական աղութին ծուխը մշտնջենաւորելու կրօնական երկիւղածութիւնը տւէր:

Ազգերը կը մեռնէին, կը խորթանան իրենք իրենցմէ, երբ կը դադրին ինքզինքնուն հաւատալէ, այսինքն կը դադրին սպասարկելէ այն իտէալներուն՝ որոնք դեռ երէկ ամէն ինչ էին իրենց համար: Մեր արդար դատը որ զինն է այս ժողովուրդի յապաղած երազներուն, արդարութեան չլճարուած պարտամուրհակն է, պէտք չէ դադրինք զայն հետապնդելէ: Մեր ցեղային աւանդութիւնը իր ծերունի հայրապետներէն մին մինչև Արարատի անմատչելի կատարը բարձրանալու կը մղէ, իր տենչերուն առարկայ Նոյան տապանին ի խնդիր: Հայութիւնը դեռ երէկ նման էր այս սրբազան ծերունիին իր արդար իրաւունքներու վերականգնման յոյսով, զայն ունենալու ապագայ առոյգ հաւատքով:

Այսօր մենք կը գտնուինք նորէն, ով զիտէ քանիբնորդ անգամս ըլլալով մեր պատմութեան մէջ, նիւթական և քաղաքական տխուր պատկերի մը առջև. պիտի չմտահոգուէինք այնքան, եթէ ինչպէս ըսինք յուսահատ անդամալուծութիւն մը չընդարմացնէր մեր հողիները, առաջնորդելով զմեզ յուսահատութեան և անտարբերութեան Պրոպատիկէի մը եզրին:

Դեռ երէկ անձկութեամբ կը նայէինք ապագային, ոչ անոր համար միայն որովհետև ներկան չէր զոհացներ զմեզ, այլ որովհետև ծարաւն ունէինք արդարութեան և ազատութեան՝ որոնք մեզի համար առնուազն աւելի կ'արժէին այս աշխարհը լեցնող նիւթական իրողութիւններէն: Դեռ երէկ երազն ունէինք մեր կոպերուն, արցունք՝ մեր թարթիչներուն, և հայրենի կարօտ մեր հողիներուն մէջ. և մեր սպասումը կենդանութեան զեղեցիկ հաւաստիքն էր, ապագային հսկելու արթնամտութիւնը: Այսօր ամէն ինչ մոխրածածկ ու անկերպարան, տարտամ և անիմաստ ուրախութիւններու և ապրումներու ենթակայ, որուն իրաւունքը առնուազն այլասերում կ'ենթադրէ, չեղումը մեր հայրերու աւանդութենէն:

Կը պատմեն թէ Լէնկթիմուրի սարսափներու շրջանին, մեր պատմութեան այդ մութ օրերուն, բռնակալը լսած ըլլալով թէ «Սև Հողեր»-ու ժողովուրդը, հակառակ իր գերութեան շղթային և ընդունած վէրքերուն, դեռ կը շարունակէ մնալ անընկճելի, օրերով խռտանգել տուաւ զանոնք առանց անսալու անոնց լաց ու կոծին և յօժարումներուն, և դադրեցնել տուաւ ծեծը այն տտեն միայն, երբ անոնք սկսան պարել: Այս վերջին երևոյթը նշան էր թէ անոնք մոռցած էին ամէն ինչ, թէ անոնց մէջ սպանուած էր կենսունակութեան ողին եւ վերածուած անդիտակից խլեակներու:

Որքան նման է այս պատկերը իտէալէ պարպուած և ոգեղուրկ մեր օրերու Սփիւռքի Հայութեան: Արդեօք կը չափազանցե՞նք. իցիւ թէ այդպէս ըլլար: Իրողութիւն է որ մենք եզրին ենք մեր երազներու, իտէալներու և իրադրածումներու Պրոպատիկէին, ու կը սպասենք բանի մը որ չի գար, որ կ'ուշա-



նայ, և սակայն այդ սպասումը ինչպէս ըսինք, չէ այն դալար և առոյգ ակընկալութիւնը՝ արդիւնք դեռ չմեռնող կայծերու, այլ այն անդամալոյծ հոգեվիճակին, որ Պրոպատիկէով բացատրելի է միայն:

Պէտք կա՞յ այս վիճակը ախտանշող օրինակներու, յետ-պատերազմեան Սփիւռքի մեր կեանքին մէջ, անոնք բազմաթիւ են և տխուր, կը բաւէ դադրել պահ մը անդամալոյծ այդ հոգեվիճակին պատկանելէ, կարենալ խորզալու զայն իր անհատական, հանրային և ազգային բոլոր երեսներուն վրայ:

Քսան տարի է որ մեր Եկեղեցին, ըլլայ Սփիւռքի մէջ, ըլլայ հայրենի հողին վրայ, քիչ առ քիչ կը մեռնի, կ'անշքանայ, իր հետ մահուան տանելով իրմով պայմանաւոր հոգեկան և ազգային այն բոլոր արժէքները որոնք դեռ երէկ, եւ այսօր առաւել չափերով, մեր հոգեկան և ֆիզիք գոյութեան ազդակներն ու թարմատարները կը կազմէին: Ճիշդերը որոնք փորձուեցան և դեռ կը փորձուին այդ աւերը դարմանելու, անհամեմատօրէն փոքր կ'իյնան: Մեր Եկեղեցին քսան տարի է որ իր Պրոպատիկէի եզրին է, սպասելով չես զիտեր ի՞նչ բանի: Մեր կուսակցական միութիւնները երէկի վառ երազներէն պատրանաթափ՝ իրենց էնէրժին սպառելու համար զիրար կը մեղադրեն ու կը հարուածեն քսան տարիէ ի վեր, ատով պայմանաւորելու համար կարծես իրենց գոյութիւնը: Հակառակ սակայն ներքին ճակատի վրայ եղած անմիտ եռանդին, անոնք ևս տակաւ յուսահատութեան թոյնը կ'ըմպեն, ու շէմած կը սպասեն բաներու՝ որոնք բնաւ պիտի չգան իրենց, եթէ իրենք չերթան անոր: Վերջապէս անձնիւր հայ անհատ ինքն իր մէջ կորովազուրկ և անդամալոյծ, առօրեայի մը միայն հետամուտ՝ տաւ կաւ կը փոքրէ իր պարտականութիւններուն չափը՝ ազգին, Եկեղեցին, դպրոցին հանդէպ: Արդի աշխարհին ծանօթ այս հոգեվիճակները առաւելագոյն չափերով կը շեշտուին մանաւանդ Հայ Սփիւռքը կազմող համայնքներուն մէջ, քաղաքական, ազգային և մշակութային Պրոպատիկէներու եզրին հանգչեցնելու՝ հոգիէն անդամալոյծ այս խլեակները:

Ամէն ինչ իրարմէ սպասել, չեղածին համար զիրար ամբաստանել, ըլլալիքները, կարելիութեան սահմանին մէջ, յիմար ու երկրորդական պարագաներու առնչելը, քսան տարի է որ լքած է Հայ Սփիւռքը իր անկազմակերպ, տարտամ և անգոյն ճակատագրին: Եթէ չէինք կրնար քաղաքական և ազգային ինքնուրոյնութիւններ ունենալ մեզի պարտադրուած օտար միջավայրերու մէջ, կրնայինք գոնէ ոգեկան ինքնուրոյնութիւն մը և զօրոյթ մը ըլլալ, մեզմէ չօտարանալու և ուրիշներուն յարգանք պարտադրելու չափ:

Ի՞նչ բանի կը սպասենք մեր եկեղեցական նուիրապետութիւնները լեցնելու և կազմակերպելու համար, մեր կուսակցութիւններու ճիշդերը միացնելու և մեր ազգային կեանքին նեցուկ ծառայեցնելու համար, առևտրական խաղերուն ենթակայ մեր դրամազուլները հայ մշակոյթին ծառայեցնելու համար:

Ո՞վ պիտի գայ ըսելու մեզի թէ մենք ազգային և կրօնական անյետաձգելի պարտականութիւններ ունինք որոնց իրադրոժման համար վաղը լիբերալիստ ուշ է, և վերջապէս, ո՞վ պիտի ձերբազատէ զմեզ այն ախտաւոր անտարբերութիւններէն որ կ'ամլացնէ մեր հոգին՝ առաջնորդելով զայն գաղութահայ մեծ Պրոպատիկէի եզրին:

ԽՄԲ.



## ԿՐՕՆԱԿԱՆ

### ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՍԷՋԷՆ

«Բարեւոք է մեզ աստ լինել . . .»

Ճիշդ է որ Աւետարանիչները փակադիմ մը կը բանան Պայծառակերպութեան հրաշալի դէպքին ականատես, և մտաւքանչաւցումի մը խանդին մէջ «ինքզինք կորուսած» առաքեալին բերնովը ըսուած այս խօսքին քովէն: Եւ այդ փակադիմը՝ «եւ ոչ զիտէր զինչ խօսէր, քանզի զարհուրեալ էին», առաքեալները կը դնէ անգիտակից, իրենց միտքը դեռ չբացուած սկանակներու մակարդակի մը վրայ: Տարակոյս մը հետեւաբար յառաջ կուգայ մեր մէջ, իմաստ մը գտնելու այդ քանի մը բառերու ետին:

Եւ սակայն, Աւետարանի ոգիին հակառակ մտածումի մը երկիւղը պիտի չունենանք, եթէ այդ բառերը առնենք իրրեւ հարադատ արտայայտութիւնը այն հոգեվիճակին — առաքեալներու մտածումին ու զգացումներուն ևս այլակերպուած ըլլալն է ատիկա — որուն՝ իրենք զիրենք ձգած, յանձնած էին, հեռաւոր բարձունքի մը մենութեանը մէջ իրենց վարդապետին և իրենք իրենց էութեանը հետ աւելի մօտիկ, աւելի ամբողջ զգացող հոգիները այդ աշակերտներուն: Եւ գուցէ, տակաւին, աւելի ուղիղ գիտակէտ մը ընտրած պիտի ըլլանք այս կերպով, թափանցելու համար խորունկ այս հրաշալիին խորհուրդին, տրուած ըլլալով և ընդունելով որ մարդիկ իրենց խանդավառութեանը պահերուն է որ ամենէն աւելի իրենց բնական՝ այսինքն իրական հոգեվիճակներուն, կարողութիւններուն, ձգտումներուն արտայայտութիւնը կը բերեն, զանոնք կ'ապրին ու կ'իրագործեն: Խոյս'նքը ուրեմն հարկ է ընդունիլ իրրեւ յատկանշականը մարդուն գործելուն, և ոչ թէ բեկումը: Բեկումը՝ պարպուած հոգիներու պարտութիւնն է՝ մարդու իրենց արժանապատուութիւնը պրկուած ու ոտքի պահելու անկարող էակներուն ամենէն ընտանի բայց նուաստացուցիչ ճամբան:

«Երկնքի դրացնութեան»ը այնքան մօտիկ այն բարձունքին վրայ — Թաբոր լեռ,

որ աշխարհագրական ձև ըլլալէ աւելի խորհրդանշական պատկեր մըն է այլևս — ամէն որ իր աշակերտներուն հետ իրրեւ մարդ ապրած վարդապետը, էր կարծես անոնց այնքան ընտանօրէն կոչած «Տէր»ը: Անոր արտաքին կերպարանքին մէջ ամէն ինչ փոխուած կ'երևէր: Լոյս-զգեստներ, նոր դիմագիծ, նոր արտայայտութիւն: Առաջին անգամն էր որ անոնք՝ միամիտ այդ աշակերտները, իրենց աչքերը կը բանային բոլորովին տարբեր, միւս այն իրողութեան՝ որ ո՛վ մանաւանդ յատկանշուած է Քրիստոսի անձնաւորութիւնը — Ասուծոյ — Որդիութիւնը Անոր — որուն մասին վարանքով անդրադարձեր էր Ինք, ամէն անգամ որ Իր շուրջը համակրանքով մը խոնուող նայուածքներ, իրենց ապշութեանը մէջէն հարցումն են ըրեր Իր ո՛վ և ի՞նչ ըլլալուն: Բայց ամբոխին հետ Իր աշակերտներն ալ հասուն էր նկատած Ան, ըմբռնելու համար մարդկայինէն վեր մակարդակի մը վրայ նոյնչափ իրաւ ու կենդանի իրականութիւնը:

Թաբոր լեռան այսպէս ըսենք լուացուած, սրբազործուած մթնոլորտին մէջ, պատասխանն էր որ կուգար քանիցս կրկնուած հարցումին: Այլևս հասուն համարւող այդ աշակերտներու աչքին Աստուած էր որ կը յայտնուէր՝ Իր Որդիին, իրենց վարդապետին անձին, անոր արտաքին կերպարանքին վրայ:

Թաբոր լեռան հրաշալին, խորհուրդն է ուրեմն, կրնանք ըսել, այլ կերպ իմացուած աստուածայայտութեան մը:

Մինչ մարդեղութեան խորհուրդով առաջին յայտնութեան պարագային Աստուած Ինքն է որ — Իր Որդիովը, Իր Բանովը — կ'առնէ կերպարանքը մարդկային բնութեան, հետեւաբար աստուածային տարրեր, Գերագոյն էութիւնը ըմբռնել կարենալու համար իմանալի բջիջներ բերելով կը բաշխէ կարծես մարդոց հոգիներուն: Պայծառակերպութեան խորհուրդով, մարմին առած նոյն Բանը՝ Որդին, իր անձին, իր արտաքին կերպարանքին մէջ, նոյն Աստուծոյ ներկայութիւնը կը յայտնագործէ, այս անգամ իրապէս երաշխաւորելով կարելիութիւնը մարդուն, ինքզինք լեցնելու Անոր խորհուրդովը, այդ լիութեամբ բարձրանալու Անոր իմաստին, և այս անգամ Ինքը բնակելու Անոր մէջ, իրրեւ իր յաւերժական



վախճանին մէջ . . . պայծառակերպուած :

Որքան յատկանշական է այս առթիւ արուեստագէտին և իր ձեռքին տակ ունեցած տարրերուն, նրա թեղէններուն հանդէպ անոր վերաբերմունքին, կեցուածքին, զանոնք օգտագործելուն եղանակը, բացատրելու համար քրիստոնէութեան առաջարկածը մարդերուն՝ ըմբռնելու համար իմաստը իրենց կեանքին, իրագործելու համար վախճանը իրենց էութեան :

Արուեստագէտը լուսաւոր բանականութիւնն է՝ իրերու, էականիւրու ճշմարիտ արժէքին, իմաստին հասկացողութիւնը ունեցող՝ զանոնք բանաւոր կարգի մը մէջ ըմբռնող : Իրմէ բերուած լոյսին գէմ բացուած, աշխարհին, բնութեան պատկանող երեւոյթները բոլորովին տարբեր իմաստ մը կ'առնեն, քան ինչ որ ունին անոնք սովորական միաբերու ըմբռնողութեանը մէջ : Ուրիշ խօսքով, արուեստագէտը գէպի Տիեզերքին խորհուրդը դարձած և իր էութեանը խորէն գէպի ան յորդող սիրոյ շնորհով, ինքզինք և իր մէջ իրեւ գերագոյն վախճան բնակող Կարգը կը գրոշմէ իրերուն, էականներուն վրայ, անոնց իրարու հանդէպ ունեցած ունէ ձևի յարաբերութեանը, անգործ, խանդէ՛ իմաստէ պարպւեալ լինելութեանը մէջ նոր Զե ու նոր իմաստ յառաջ բերելով :

Արուեստագէտը, իր մէջ արդէն իսկ գոյ, զինքը խոյանքի մղող ողիւի մը տեսիլքէն խանդավառ, նոր մակարդակի մը վրայ կը հանէ իրերը, և այդ տեսիլքէն բխող, անկէ թելագրուած Զեին տիպարովը կարգաւոր նոր ստեղծագործութիւն մըն է որ կը կատարէ : Եւ ահաւասիկ, զեռ անոր մատենութեան հպումը չզգացած, անոր մտքէն ու հոգիէն ճառագայթող լոյսին չհանգիլած, իմաստէ դատարկ, ունէ յարաբերութեամբ, չխորհուած կարգով մը իրարու քով եկած նոյն իրերը, անոր հանգիլումը ունենալէ յետոյ, կերպարանափոխ եղած, ոգեկանին մէջը բարձրացած, կը ներկայանան իրեւ նոր ու բարձր շուքով մը մինչև իրենց տարրերուն յետին մանրամասնութիւնները թափանցուած, իմաստ հաղած, իրենց յարաբերութիւններուն մէջ բանաւոր Կարգի մը, Զեի մը օրէնքը իրագործած, հետեւաբար նաեւ ներդաշնակուած, գեղեցիկ, իբրեւ նորօրինակ կերպարանքներ, երե-

ւոյթներ՝ խորհուրդի մը լոյսին մէջէն պայծառակերպուած : Ամէն ինչ յատկ է այնտեղ, և ամէն ինչ պայծառ և իմանալի կը դառնայ այն ատեն :

Արդ այն պայծառակերպութիւնը զոր արուեստագէտը կ'իրագործէ այսպէս զգալի աշխարհին մէջ, եկեղեցիին զորքը կ'ըլլայ բերել հոգիներու աշխարհին : Իրաւ, այս հոգեկան պայծառակերպման իղծը չէ՞ որ երեւան հուզայ մեր եկեղեցւոյ աղօթքներուն մէջ, երբ հոգեբոլու կրօնաւորը, կանգնած իր երկրին վրայ իջնող մօտիկ գիւմաց, կ'աղերսէ «կենդանի Աստուծոյ ամէնօրհնայ Որդիին որ իր փառքին անստուեր նշոյլները ծագեցնէ» մօտիկ սարսափը ապրող իրենց հոգիներուն վերեւ : Ահա՛ օր խորոց օրտի» Աստուծոյ հետ իր խօսքը՝ այնքան կենդանի պատկերացումներով խտացուած : Եւ ատիկա՛ խորունկ ըզձանքով, զիտակցութեամբ, օրովհետեւ կը հաւատայ թէ ծագող այդ նշոյլներուն զիմաց ճաշիկ մեղք, ջնջին յանցանք, խզին կապանք, կենդանածին մահացեալք . . . տեղի տան տիրութիւնք, վախճու խաւարն, զնայ գիշերն, տարագրի տաքնապն, չքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն . . . : Պայծառակերպումն է ահաւասիկ ասիկա, հոգիներու տիեզերքին :

Ըսինք թէ հոգիներու Պայծառակերպութեան խորհուրդով Յիսուս կարելիութիւնը երաշխաւորեց մարդուն ինքզինքը Աստուծոյ բարձրացնելու :

Մարդը Աստուծոյ մէջ ուրեմն ըմբռնուած :

Եւ արդարեւ այս խորհուրդը քրիստոնէութիւնն է որ ամենէն աւելի ողջամիտ, մարդուն իրաւ էութեանը, անոր արժանապատուութեանը վայել հասկացողութեամբ մը կ'իրագործէ : Աւետարանի հրաշալին կենդանի խորհրդանիշն է այդ Պայծառակերպութեան : Մարդը Աստուծոյ բարձրացած, Աստուծոյ մէջ, Բայց ոչ թէ իր մարդու յատկանիշերը մոռցուած, ուրացուած : Աստուծոյ բարձրացած մարդը, մարդն է նորէն՝ աշխարհի մէջ ապրող, այնտեղ գործող՝ իր բոլոր ձգտումներովը, կարողութիւններովը, զգացումներովը : Միայն թէ, այդ բոլորը՝ այնպիսի կարգով, նոր արժէքով, նոր հասկացողութեամբ, ուր յայտնի կերպով բոլոր տարրերը օգտագործ-



ուած ըլլան նոյն նպատակի մը իրագործման՝ իմաստուն բանաւորութեամբ մտածուած, ներդաշնակուած:

Եւ միւս կողմէ, այս ներդաշնակումը՝ ա՛յս իսկ աշխարհէն, անցաւոր այս կեանքին իսկ տարրերովը, կարելիութիւններովը: Պայծառակերպութեան պատկերին՝ խորհուրդին միւս երեսը՝ ասիկա:

Ձէ՞ որ ամէն մարդու շնորհ մըն է տրուած: Առանց որակի և աստիճանի խնդիր յարուցանելու: Ու չէ՞ որ մէկ չէ միայն տեսակը շնորհին: — Գտնել ուրեմն, իր էութեանը հետ տրուած, զայն իրագործելու սահմանուած թաքուն կարողութիւնը, զօրութիւնը իր հոգիին: Ինքզինք բանալ շնորհի մը վիճակին: Բայց ոչ անգործ, կրաւոր սպասումով մը: Ներգործական ակրով մը գնել ինքզինքը այդ շնորհին մէջ, որով մանաւանդ գիտնալ սիրել: Ահա ինչ որ կրնանք ըսել թէ կ'ուզէր ուսուցանել Յիսուս, իր անձին իսկ Պայծառակերպութեան օրինակովը:

Ու սէրը, իբրեւ ներուժ ակնադբիւրը մարդուն ազնուագոյն մղումներուն, ձգտումներուն, տեսիլքի մը կը սեւեռէ հոգիին կարողութիւնները: Անով միայն կարող կը դառնանք վերջացումը ունենալու տիեզերքի իրերուն, էականերուն, բնութեան ու կեանքին: Եւ եթէ աշակերտները կրցան իրենց հոգին բանալ իրենց վարդապետին այդ ներքին աշակերպումին, այդ անոր համար որ իրենք ալ զարծեր էին այլեւս տեսիլքի մարդեր, այսինքն իրերուն եւ էականերուն հայեցողական տեսիլքը ունեցող արուեստագէտներ, բանաստեղծներ:

Եւ արդարեւ սիրոյ ըմբռնումի մասին ի՞նչ աւելի երջանիկ եղբակացութիւն՝ քան հետեւելը. «Սէրը կենդանի էակի մը կը ձգտի միայն»: Եւ ի՞նչ՝ աւելի կենդանի՝ քան նոյնինքն ազբիւրը, ծնուցիչը, զեղուն՝ ստեղծագործ էութիւնը կեանքին, ու նոյն ատեն բաղձացուած վախճանը անոր՝ Աստուած: Ուրեմն՝ բարձրանալ, ինքզինքը գնել սիրոյ շնորհին մէջ, սիրել ամենէն կատարեալ ու ամենէն կենդանի էակը, սիրել է՛զ Աստուած: Եւ ինչո՞ւ զարմանալ: — Ինչպէս որ մարդ երբ կը սիրէ, իր բոլոր ձգտումներով, զգացումներով դէպի իր սիրած էակը լարուած կ'ըլլայ, զայն կարծես իր մէջը կ'ունենայ, իբրեւ իր երազը զայն

«ամէն տեղ իր հետը կը տանի», և ինք ալ նոյնքան ուժգնութեամբ իր սիրած էակին մէջը կ'ապրի, զայն կը զգայ, նոյնպէս, ազնուագոյն սիրոյ շնորհի մը մէջ երբ կարենանք զԱստուած սիրել, իբրեւ մեր սիրոյ առարկան զԱյն մեր մէջը ապրեցնել, այն ատեն մենք զմեզ իրեն բարձրացուցած՝ իրեն մէջը կ'ապրինք, իրարու հետ, իրարու մէջ, միւս կողմէ սակայն, առանց մեր անձնականութիւնը յատկանշող մեր եսը կորսնցնելու:

Եւ անգամ մը որ կարենանք մենք զմեզ՝ մեր մտածումները, զգացումները, մեր էութեան բոլոր ձգտումներովը աշակերպել, ազնուագոյն սիրոյ մը հոսանքին մէջ պայծառակերպել, այն ատեն անտարակոյս պիտի կարենանք ըմբռնել ինչ որ հրաշալին է մնացած միշտ, սուրբերու, ճշնաւորներու, մարդկութեան մեծագործ դէմքերու, տեսիլքի մարդերու կեանքին մէջ: «Լուսոյ որդիներ» արդարեւ ասոնք ամէնքը՝ որոնք տիեզերքի խորհուրդը, հոգիի կեանքին իմաստը Աստուծոյ մէջէն ըմբռնած, անհուն զօրութեամբ մը լեցուած կը զգան իրենք զիրենք: Եւ այդ լիութեան զգացումովն է որ չեն վարանիր դիմակալել ամէն դժուարութիւն, կրել ամէն ինչ, որ բանաւոր Կարգին, Ձեռն թշնամի «մութ ուժեր»ը կը թափին կտոր կտոր, քանդելու համար ոգեղէն այն կառոյցը, ուր մահը միայն «կը դարձնուի» իրենց գոյութեան:

Տեսիլքի այդ մարդերուն պէս, մենք եւս, Աստուծոյ ներկայութեանը խանդին մէջ երբ գիտնանք սեւեռուն պահել մեր հոգին, անոնց նման մենք ալ պիտի կարենանք չտառապիլ ժամանակին անցնելէն, պիտի չունենանք ձանձրոյթը՝ անբազ, խորտակուած հոգիներուն, որոնց համար տառապանք է կեանքը, մղձաւանջ՝ ժամանակը, զոր սպաննել կը խորհին, յիմարօքէն վերջ տալով յաճախ իրենց անձին իսկ գոյութեան: Ընդհակառակը, մեր կեանքը պայծառակերպելու մեր տեսիլքին մէջ գիտակցօրէն «ինքզինքնիս մոռցած», պիտի չայցունինք ոեւէ տեսակի երկիւղէ մը, ճիշդ ինչպէս արուեստագէտը կամ գիտունը ստեղծումի իրենց թափին մէջ, մարդարէն՝ ամբոխներու հոգիներուն իր Աստուծոյն պատգամը իջեցնելու համար



Անոր ներկայութեանը ելած պահուն իրենք զիրենք թոթաւած ու է տեսակի երկիւղէ պայծառ հպարտութեամբ մը կը կենան ժամանակին մէջ, իբրեւ տէրերը անոր, իրենք սակայն իրապէս յաւերժութիւնը ունենալով իրենց մէջ, զայն ապրելով այս իսկ երկրի վրայ:

Ու դարձեալ, ինչպէս պարագան է նաեւ արուեստագէտին, զողը, ընդհակառակն, մտնէ պիտի մեր մարմիններէն, առնելու համար մեր հոգիները իր սարսուռին, իր ցնցումներուն մէջ, երբ նուազումը զգանք մեր խոյանքին, երբ աղօտի պատկերը մեր երազին, աչքերուն զիմաց խանդով լեցուն, յոյսով առատ մեր հոգիներուն: Հասկնալի այլեւ՝ թէ այդ պահէն, սարսուռի այդ վայրկեանէն, բեկումն է որ կ'ապրինք մեր տեսիլքին: Պարտութիւնը մեր երազին՝ ջիւղերուն իսկ վրայ մեր հոգիներուն: Եւ այդ զողը, զողը չէ՞ արդարեւ եւ դառնալուն դէպի տափակ իրականութիւնը կեանքին: Դողը չէ՞ այն մտաւախերուն որոնք «աշխարհի իմաստուն որդիներ» են ճարպիկօրէն կը սերմանուն մեր մէջ: Այն նուազումներուն՝ ուր կը զգայազրկուինք մենք, մեր նայուածքներուն դէմ անոնց կողմէ նետուած թաց վառօղով պայթուցիկներու զիմաց, որոնց կրակը չեւ տեսներ, այնքան թանձր է որովհետեւ անոնց հանած ծուխը, և որոնք շրջապատը մթազնելու իրենց պաշտօնն է միայն որ այդպէս իմաստներէն կ'իրագործեն:

Ի՞նչպէս տառապանքը քաղցրանար այսպիսի տկար հոգիներուն համար: Ի՞նչպէս չխորհէին անոնք, ճարահատ, սպաննել այն՝ որ իրենց յիշեցնէ պիտի իրենց ապրիլը, իրենց կեանքը՝ այսինքն զիրենք ձանձրացնող տառապանքը: Եւ հետեաբար, ի՞նչ աւելի անտանելի ներկայութիւն, քան զգացումը, անդրադարձը ժամանակին, որ ոչ միայն պիտի անցնի կտրուած, անշարայար, իր ներկայութիւնը միակ ամբողջի մը ըմբռնումին, իմաստին չհանած, այլ մինչև իսկ պիտի չանցնի, իբրեւ երկարաձգուող ձանձրոյթը իրենց գոյութեան՝ իրենց ջլատուած հոգիներէն ներս: Որովհետեւ աւելի՞ ժամանակը, այն հոսանքն է որուն վրայ ամենէն աւելի հաստատուն, լեցուն, բեռներով հաւասարակչուած նաւն է որ կրնայ առագաստ բանալ:

Քրիստոնէութիւնը կրօնքն է կեանքը

ապրելու արուեստին: Ան հոգիի տոկունութիւնն իսկ է իր էութեանը մէջ: Անկապ վրէպը ունի բրած Քրիստոսի անձին մէջ այնպիսի զօրութեան մը, ուժի մը — խաչեալ Քրիստոսի մը ճառագայթուն զօրութիւնն է ատկա — որուն միջոցաւ և որուն ներկայութեանը, մարդ զիմացկունութիւն մը կը զգայ ինք իր մէջ, և քաջութիւնը կ'ունենայ ստեղծագործ թափով մը կեանքը ապրելու, ու մահուան զիմաց նոյն աշխոյժով և ուժ՝ զընթեթեամբ իր վախճանին զիմելու: Այսպիսիներուն համար տառապանքներն ու աղջամուղջները կը դադրին սարսուռի ըլլալէ, որովհետեւ անոնց հոգին՝ զեղումով մը առատ, հրճուանքն ունի կարողութեան՝ նոր իրականութեան մը լոյսով մտածել, ըմբռնել կարենալու՝ ծանրութիւնը կեանքին, ձանձրոյթը ապրելուն՝ ժամանակին մէջ, եւ այլակերպելու անորոշութիւնը մութերուն, սարսափը աղջամուղջներուն:

Ուրեմն գիւտը ընել և ստացումը ապահովել այդ զօրութեան: Ուրիշ խօսքով, բացառիկ, ընտրեալներու խումբի մը վերապահուած աւելի ազնուական, աւելի քնքուշ ու լուրջ զգայնութեամբ մը թափաւուն «հոգին» ունենալ, կարենալ ապրելու համար մենութիւնը՝ ստեղծագործ մեծ հոգիներու, և մնալու համար վեր՝ սովորական մարդերուն երկրաքարշ ու տափակ ապրումներէն՝ հակառակ մեր մարմիններովը եւ կեանքին պայմաններուն հարկադրանքովը մեր անոնց մէջ խառնուած ըլլալուն: Իր հոգիին մտերմութեանը մէջ անկեղծօրէն հաւատալ օրերուն այլակերպման արժէքին: Եւ ասիկա՝ նոյն անկեղծութեամբ՝ մերկ առանձնութեանը մէջ խուցիւրու, սիրտ առնող գեղեցկութեանը, ազատութեանը հետ քնութեան, և կամ խորունկ շլացումին զիմաց սրահներու խրախճանքներուն ու լուսահեղութիւններուն: Ու հաւատալ մանաւանդ ապրումին՝ այս անգամ ստեղծագործ մենութեան, ուր քիչ քիչ ձեռք մարմին կ'առնէ մարդուն մէջ զործող ստորին մակարդակի հոգիէն իր նկարագրովը բոլորովին տարբեր միւս այն հոգին, ճերմակ հոգին, որուն մէջէն միայն իրենց օրերը այլակերպելու հրաշքը իրագործող հոգիներ «խումբ առեալ» պիտի զիտնան ըսել հըրձըւանքով. «Բարեւ է մեզ աստ լինել...»:

ԹՈՐԳՈՄ Ա.Բ.ՂԱՅ



## ԱՂՕԹՔԸ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

Ահա թէ ինչո՞ւ համար ժողովուրդները տխուր են երբ չունին եկեղեցի: Անոնք աղօթք կ'ուզեն նոյնիսկ այն ատեն երբ մոռցած են երկար ատենէ ի վեր անոր սրբազան տարազները: Անոնք կ'ուզեն զգալ անոր ծփալը իրենց շուրջ, օդին մէջ, իրենց օրօրոցներուն և զերեզմաններուն վրայ: Եկեղեցին բարի Աստուծոյն տունն է, բայց ան տունն է նաև ժողովուրդին, աւելի անհրաժեշտ՝ լքուած հոգիներուն, քան հիւանդանոցը՝ մարմիններու առողջութեան համար:

Անշուշտ սկեպտիկներ կը պնդեն թէ աղօթքը ոչ մէկ արձագանգ կ'արժնցնէ միւս աշխարհէն, և թէ ան կը կորսուի երկինքին սա յաւիտենական լուսութեան մէջ, որ դարձուած է կը սառնցնէր Բասկալի հանճարը:

Բայց եթէ այսպէս էր, ինչո՞ւ համար մարդկութիւնը պիտի յամառէր հազարաւոր տարիներէ ի վեր, նետել իր յուսահատ կոչերը պարապութեան մէջ: Ան շատոնց պէտք է հրաժարած ըլլար իր աղօթքներէն: Յարգ պէտք է գոցած ըլլար, ոգեկան սնանկութեան պատճառաւ, իր եկեղեցիները, իր սինակոհները, իր մզկիթները և իր կոատուները: Եթէ ան կը շարունակէ անոնց մէջ ծնրադրել, այս անոր համար, որ փորձառութեամբ զգացած է թէ Աստուած խուլ է: Անթիւ ուխտապատկերները, որոնք կը զարդարեն սրբաբաններու պատերը, կը վկայեն երկինքի պատասխաններուն:

Գիտութիւնը մեզի կ'ըսէ թէ ոչ մէկ ոյժ կը կորսուի քնութեան մէջ, թէ ամէն թրթռացում կը մխրճուի անսահմանօրէն եթերին մէջ: Նոյնն է հոգիի երկնային թրթռացումին համար որ աղօթքն է: Ան կը ճամբորդէ անհունին մէջ և, հպելէ վերջ սրտի մը որ մեզ կը սիրէ, կը վերադառնայ մեզի օրհնութեամբ:

Պատասխանը երբեմն կ'ուշանայ, բայց յապաղած աղօթքները նուազ արդիւնաւորներն ու քաղցրերը չեն: Միշտ մեր ուզածը չէ որ կ'ըլլայ, բայց անոր բարիքը անպակաս է: Մարմնի առողջութեան փոխարէն, երբեմն հոգիի առողջութիւնն է: Փաղցր եւ քնքոյշ ձայն մը մեզի կը խօսի շատ ցած,

մեզ կը բարձրացնէ, կը մխրճարէ, կը հանդարտեցնէ մեր խռովքները և կը դնէ բաւասան մեր վերքերուն: Ան մեզի կ'ըսէ.

— Բարի և մաքուր եղէք, սիրեցեք զիրար. դուք եղբայրներ էք. կեանքը ողորմածութիւն է, սէ՛ր է:

\* \* \*

Ահաւասիկ երկինքի պատասխան մը, որ շատ աւելի կ'արժէ ժամանակաւոր նըպաստներէն: Զանգուածի հոգին զայն կը հասկնայ առնուազն շփոթակի: Ահա թէ ինչո՞ւ համար բոլոր դարերու մէջ և բոլոր երկինքներու տակ, ի հեճուկս ամէն կարգի սկեպտիկութեան և ծաղրանքի, ժողովուրդը կը յամառի աղօթել, և թէ ինչու համար ալ աղօթքը անմահ է:

Եւ ահա ինչ որ կը ճշմարտէ բոլոր լաւատեսութիւնները, երբ ժողովուրդ մը կ'աղօթէ, ան կրնայ անցնիլ ցաւազին տաղնապներէն և դուրս գալ անոնցմէ ճակատը վեր: Ոռովքէն վերջ, վերադանելով խաղաղութիւնը: Ան կը գտնէ իր հաւատքին մէջ հոգեկան վերանորոգման և երիտասարդութեան ոյժ մը: Ահա թէ ինչո՞ւ մեր Ֆրանսան անմահ է: Ան ծնած է աղօթքով մը Թօլպեքի մէջ, և չի դադրի աղօթելէ իր պատմութեան մթին, ինչպէս լուսաւոր օրերուն. ու գպնելէ վերջ երբեմն անդունդի յատակին, ան կրկին կը խոյանայ և միշտ թևի հարուածով մը վերստին աստղերուն կը բարձրանայ:

Բայց աղօթքը անհրաժեշտօրէն կապուած է քարէ պատերու: Նոյնիսկ եթէ չգտնուէին այլեւս տաճարներ երկրի վրայ, մարդը պիտի չգաղթէր ոգեկոչելէ զԱստուած: Պէտէվին կ'աղօթէ իր վրանին տակ անապատի հովին. ձկնորսը՝ իր նաւակին մէջ փոթորիկի ընթացքին. էսքրիմացին՝ իր սահնակին մէջ ձիւնի հողմերուն տակ. վայրենին՝ իր խճիթին մէջ, ինչպէս Աթենացին՝ Ագրօպոլի վրայ: Յէթիշապաշադ կ'աղօթէ Մեծ Ողիլին՝ պարելով թմրուկով լուսնի լոյսին տակ, և զեռ աւելին, հնդկը՝ ծննդային թախծալի հնչիւնովը, երբ մահուան թևը քսուելով կ'անցնի իր հոգիէն զայն խելէ առաջ իր մարմնէն:

Նախնի քրիստոնեաները տաճարներ չունէին. անոնք կ'աղօթէին հոգին տակ,



գեանադամբաններու մէջ: Մեր նախահայրերը յաճախ լսած են պատարազը մարագներու, քարանձաւներու կամ անտառներու եղբիւն: Մենք պիտի աղօթէինք ի հարկին բնութեան մեծ տաճարին մէջ, երկինքներու տառազարդ կամարներուն տակ: Չարեր ըսած են քրիստոնեաներուն:

— Օ՛, ձեր գեղեցիկ եկեղեցիները եւ ձեր զանգակատուները, մենք պիտի տապալենք զանոնք:

Եւ քրիստոնեաները պատասխանած են պղծոն բանաստեղծ Թէոօթր Պոթրէլի հետ:

— Մենք պիտի աղօթենք անողերուն առջեւ. տապալեցէք զանոնք, եթէ կրնաք:

\* \* \*

Մենք անջատաբար նկատի առինք համանուգն ու աղօթքը. բայց հոգիին այս երկու գեղեցիկ հնչիւնները զիրար կը կանչեն. ու կը տենչան իրարու ձուլուիլ: Բոլոր սիւքերէն, որոնք կը սարսուռացնեն Եւրոպան տաւիզը, զոր մեզմէ իւրաքանչիւրը իր մէջ ունի, ամենահզօրն է կրօնական յուզումը: Հոնկէ կը բխի երգին եւ աղօթքին այնքան բնական եւ այնքան բեղուն միութիւնը, այսինքն՝ որբազան երաժշտութիւնը:

Դաւիթ մեզի կ'ըսէ թէ երկինքը կը պատմէ Արարչին փառքը: Ինծի կը թուի թէ, եթէ ես Մօցարդ մը կամ Պէթովէն մը ըլլայի, պիտի փորձէի փոխ տալ երկրային ձայն մը այս երկնային մարմիններուն, եւ յօրինել ինչ որ պիտի կոչէի «Աստղերուն Աղօթքը»: Կը բաւէ արդարեւ, ամփոփուիլ քանի մը վայրկեան, իմանալու համար փառքի ուժանան, զոր անոնք կը նետեն Յաւիտենութեան ոտքերուն, խայտալով միջոցին մէջ, եւ կրակէ մաղթանքները, զորս անոնք կը հատկտեն կապոյտն ի վեր: Հինքը կը կարծէին թէ կաւելի էր իրենց կողմէ ինչպէս լուսաւոր նոյնպէս հնչաւոր ալիքները անոնց. եւ կիկերոն, Յունաստանի փիլիսոփաներէն վերջ, մեզի կը խօսի երկնային գունդերու ներգաշնակութեան մասին:

\* \* \*

Սակայն եւ այնպէս, բնութեան բոլոր այս ձայները ճերմակ ձայներ են եւ չունին

արտայայտութիւն, որովհետեւ չունին իմացականութիւն եւ սէր: Տաք ու խորունկ ձայնը, թրթռուն եւ համակրական ձայնը, ձայնը, որ կ'երթայ Աստուծոյ սրտին, այն ձայնն է որ կը բխի մարդու սրտէն: Այս ձայնն է զոր Աստուած կ'ուզէ լսել եւ զիւնէ զատորոշել բոլոր միւսներէն աշխարհներու համերգին մէջ: Մարդը, կ'ըսէ մեզի Սուրբ Դերիգոր, պարագլուխն է ստեղծագործութեան: Ան է որ կը վարէ տիեզերական օրհնութեան գասը:

Իր հոգին Միլկաթին մըն է ցանցընուած հազարաւոր կրակներով, որոնք իր ըղձանքներն են, իր սուրխութիւնները, իր վիշտերը, իր աղօթքները. երկինք մըն է ան լեցուն՝ կենդանի, սիրող, երգող աստղերով, որոնք կը պատմեն Աստուծոյ փառքը աւելի լաւ քան գեղեցիկ աստղերը կորսուած եթերի սառած անսահմանութեան մէջ:

Անշուշտ հոգին աղօթելու համար չունի երգելու բացարձակ պէտք մը: Մայր մը կ'աղօթէ լուսնի մէջ իր մեռնող զաւկին սնարին: Ծամբող մը կ'աղօթէ առանց բառերու՝ ամայի եկեղեցոյ մը աստեղերին մէջ: Բայց ամբողջ մը հաւաքական հոգին պէտքը ունի ինքզինք լսելու, եւ արտայայտելու երգերով իր սրտի թուլէքները գէպի անհունը: Երեւակայեցէք որ երաժշտութիւնը արդիւնուած ըլլար մեր եկեղեցիներուն մէջ: Ոչ երգեհոնը ունենայինք, ոչ «Հաւատամք»ը (Credo), ոչ ալ «Տէր, գովեմք զքեզ»ը (Te Deum), ոչ «Ողորմա՛ն» (Miserere), ոչ սաղմոսները, ոչ միաժամ օրհներգները, որոնք օրօրած են մեր տղայութիւնը, այլ միայն թիւ պատարագներ, ընթերցուածները եւ միօրինակ աղօթքները: Վստահ եմ թէ ժողովրդական հոգին պիտի չհամակերպէր այս համբուսեան, եւ թէ սրբատեղին շուտով պարագ պիտի մնար:

Ահա ինչո՛ւ եկեղեցին, Ս. Գիրքէն վերջ, մեզի կ'ըսէ.

— Օհ, մի՛ արգիլէք երաժշտութիւնը — Non impediatis musicam:

Ան գիտէ թէ երգ մը երբեմն աւելի պերճախօս է քան քարոզ մը: Որքան անդամներ մարդիկ որ երկար առնեն ի վեր մոռցած էին եկեղեցիի ճամբան, իրենց տղայութեան մէկ հին օրհներգի մը ձայնէն, յանկարծ փոճկած են, ինչպէս աչ-



սորումը որ կը սարսառայ լսելով հեռաւոր հայրենիքին մէկ երկր:

Երաժշտութեան և աղօթքի միութիւնը այնքան սերտ է, որ հաստատ կը մնայ ամենաողբերգական պարագաներուն խիւ: Երբ պատերազմէն քանի մը տարիներ ատալ, Թիքանիքը, սառցակոյտէ մը ջախջախուած, նաւաբեկուեցաւ, հազարաւոր ճամբորդները, խռնուած վերնակամուրջին վրայ, տեսնելով հսկայ շողենաւին մխրճուիլը դանդաղօրէն ալիքներուն մէջ, և հասկնալով թէ ամէն ինչ կորսուած էր իրենց համար, սկսան երգել ամէնքը միասերտան անգլիական օրհներգը. *Nearer to Thee, My God!* (Աւելի մօտ քեզի, ով իմ Աստուած): Սըրտամոլիկ և վսեմ տեսարան. այսմարդերուն մէջէն շատեր, անկասկած, հեռացած էին Աստուծոյ կեանքի թոհուրհին մէջ. բայց, այս հանդիսաւոր պահուն, ուր արարածներու հրապոյրը խորտակուած էր անոնց համար, անոնք կը դառնային իրեն, իրմէ խնդրելով տեղ մը իր արքայութեան մէջ, շատ մօտիկը իր սրտին: *Nearer to Thee, My God!* Անոնք զայն կը խնդրէին իրմէ երգելով, և իրենց օրհներգը կը հնչէր աւելի բարձր քան գոգումը ալիքներուն, որոնք զիրենք ընկուղեւու կուգային:

\* \* \*

Եւ որովհետեւ երգին և աղօթքին միութիւնը այնքան բնական է, այդ պատճառաւ ան գոյութիւն ունեցած է միշտ, այնպէս որ բոլոր ժողովուրդներուն մօտ կրօնական երաժշտութիւնը ամենահինն է:

Որփէոս կը խորհրդանշէ այս միութիւնն ու հնութիւնը: Ան կը կանգնի առաստելին մշուշներուն մէջ, մարդկութեան օրբանին՝ զիւթելով իր քնարովը անտառին և քաղաքներուն գազանները: Բնութեան քուրմն է ինք որ կ'երգէ աստուածութիւնը և այնքան լաւ կը նոյնանայ որբազան երաժշտութեան հետ որ երբ քնարը կ'իյնայ իր մեռնող ձեռքերէն, Յոյները կը հաւատան զայն տեսնել երկինքին մէջ բարձրացած, ուր, փայլուն համաստեղութեան մը կերպարանքին տակ, ան կը շարունակէր երգել Ստեղծիչին փառքը:

Շուտով, Արեւելքի երկինքին տակ, երաժշտութիւնը հնչեց տաճարներուն եւ

նուիրական անտառներուն մէջ, ուր քուրմերը պսակուած դափնիով կը յառաջանան մրտենիներու անասականերու մէջէն կշռութաւոր փայլովը բարբարոս երաժշտական գործիներու, հետեւած ձերմակ թափօրովը մանկամարդ աղջիկներու, որոնք կը մատուցանեն իրենց աստուածուհիներուն աղանձներ և վարդեր:

Երազող եղիպտոսը կը կարծէ տեսնել իր աստուածային երեքութիւններուն նաւելը աստղերու արշիպիղագոսի մը վրայ և ան կ'երգէ զանոնք Թէփէի և Մէմֆիսի մէջ՝ փեակներու (*sistre*), բամբակներու (*crostale*) եւ թմրկիկներու ձայներով:

Յունաստանը կը վերցնէ իր հին աէներու (*aède*) քնարը փառաբանելու համար իր աստուածները Դեզիփիսի, Տէլուսի, Էլիւսիսի մէջ և Սթէնքի Ագրոպոլիսին վրայ:

Նոր Որփէոս՝ Դաւիթը կ'ամօքէ իր տաւիղով Սաւուղի կատաղութիւնները, անոր ներդաշնակութիւններովը կ'ընկերակցի վրսեմ աղօթքին սաղմաններուն, մինչ Դատացիները կը հնչեցնեն իրենց արծաթէ փողերը երուսաղէմի տաճարին դաւթիւն մէջ:

Հեթանոսութեան և Խորայէլի ժառանգորդ՝ Եկեղեցին կը պատշաճեցնէ անոնց հին նուագները իր նոր օրհներգներուն: Այդ նուագներուն լուրջ, քրմական կշռութը, ինչպէս անոնց այնքան պարզ, հազիւ ծըփուն, բայց այնքան քաղցր ու այնքան մաքուր ու մեղամաղձոտ զիծը կը գտնենք այն քանի մը հին օրհներգներուն մէջ որ հասած են մեզի. *Préface*, *Pater*, *In xitu Israel*, Աւագ շարաթի *Exultet*, Հանգստեան կարգի *In Paradis*, *Te Deum*: Հլու Դաւիթի պատուիրանին, *Laudate Deum in tympano et choro, in chordis et organo*ին, Եկեղեցին իր երգերուն կ'ընկերացնէ զանազան երաժշտական գործիներ, բայց առաջին երեք դարերու ընթացքին, ան կը մեղմէ անոնց հնչիւնը զետնադամբաններուն մէջ, ան ձայնարգիլ կը դնէ անոնց, կ'երգէ մեղմ ու մեղմագոյն՝ հալածողներուն ահաւոր ուշադրութիւնը արթնցնելու վախով: Բայց երբ ան կը վերստանայ իր ազատութիւնը Կոստանդինի օրով, ան կը հնչեցնէ իր յաղթական հաւատքը իր պաղիլիքներուն մէջ:

Դ. դարուն կայ Ամբրոսեան երաժշտութիւնը զոր Ս. Օգոստինոս էջը կրնար լսել առանց լալու, Միլանի մայր եկեղե-



ցիկն մէջ, և որուն վրայ Ս. Յերոնիմոս կը հիանար իր ժամանակին, կլինեալուն և մարգերուն փոխասացական երգին մէջ:

Զ. դարուն կայ Գրիգորեան երգը, որուն կանոնագիրն է Ս. Գրիգոր պապը: Շնորհիւ իր մեծափառ ձայնիւնէջին և լուրջ ու հանգիստոր կշռոյթին, ան եղած է դասական և պաշտօնական երգը եկեղեցիին, արքայական երգը որ կը տանի ամբոխին հոգին ու երազները իր ընդարձակ թեւերուն վրայ մինչև Աստուծոյ դահը և որ կը փոխարինուի լոկ յաւիտենութեան երգերովը:

Բայց սրբազան երաժշտութիւնը չի ստոր Գրիգորեան կաղապարին մէջ: Ան կ'առնէ աւելի ազատ, աւելի կայտառ, աւելի երանգաւոր դարձուածքներ Միջին դարուն արարողութիւններուն մէջ:

\* \* \*

Մինչև հիմա, շնորհիւ Պորտի, Վէնսան Տէնտրի եւ Բէրրուքի գալստցին, մենք կը ճանչնայինք Ժ. և ԺԶ. դարու երաժշտութիւնը, բայց ԺԲ. ԺԳ. և ԺԴ. դարերունը, գրուած մեզի համար դժուար լուծելի նշաններով, գրեթէ անծանօթ կը մնար մեզի: Պ. Ժազ Շէլլի իր աշխատանքներով և իր պէնէտիքիէնի գիտութեամբ մեզ յայտարարած է զայն: Դուք պիտի տեսնէք, քիչ յետոյ, թէ ինչպէս իր մոգական դաւադանը կըցած է զայն բլբլեղացնել և շնորհիւ Տիկին Լինա Յօքլի, ՊՊ. Իվ Թրնարի, Ժազ Շէլլիի և Նօթր-Տամի Սալէթին աջակցութեանց, զայն իր արժէքին մէջ վերահաստատուի:

Դուք պիտի դատէք Լէօնինի Deum timeով թէ ի՞նչ ժուժկալ ու մերկ գեղեցկութեան զիտցած է հասնիլ, ԺԲ. դարուն, Բարիզի Նօթր-Տամ եկեղեցիին այս վարպետը, ժամանակակից ուժման արուեստին, որուն խաղաղ լրջութիւնը ունի:

Դուք պիտի լսէք ի Նօթր-Տամ Լէօնինի յաջորդ ԺԳ. դարու հանճարեղ վարպետ Մեծն Բէրթիլինի Diffusa estով, ծիսական եղանակ մը, բանուած՝ արտայայտիչ ձայնաւորումներով, հրճուական վերնախաղերու խենթ փոթորիւմ մը, հնչականութիւններու խօլապտոյտ մեծ մրրիկ մը, որ կը վերջանայ երկքովի փողերու յաղթական երգով:

Ուրիշ կտորներ ԺԳ. ԺԴ. ԺԵ. և ԺԶ. դարերէն ձեզ պիտի ցոյց տան վերելքը արուեստի մը որ չէ դադրած կատարելագործուելէ մինչև Փալէսթրինա, սպասելով Պափի, Պէրլիօզի և Սէզար Ֆրանքի:

ԺԵ. դարուն, Ֆայտը Կամպրէի կանոնիկոսն է որ ի պատուի կը դնէ բազմեղանակային (contre-point) և առանց ընկերակցութեան բազմաձայն երգը:

ԺԵ. և ԺԶ. դարերու վրայ հեծնող, Ժօսքէն տէ Փրէ, որուն O Domine Jesu Christe-ն դուք պիտի լսէք, A Capella երաժշտութեան վերջնական կազմակերպիչն է նախակարպետը և հայրը այն մեծ դպրոցին, որուն փառքերը պիտի ըլլան Փալէսթրինա Խալլիոյ մէջ, Օրլանտո տը Լէսուս Ֆրանսալի և Պիլիպպայի մէջ, և Լիլիօօրիա Սպանիոյ մէջ:

Զուարթ Նօթ մը ձեզի պիտի ընծայուի ԺԳ. դարու Trois Rondeaux-ի մէջ, զոր կ'երգէին, կ'ըսեն, պարելով եկեղեցիներու դպրիկին կամ դասին մէջ, դասերգուները, գպլրները, և — Աստուծոյ թողութիւն տայ իրենց — լուրջ կանոնիկոսներն անգամ:

\* \* \*

Մեր օրերուն, Սուրբ Գրիգորի հոգին կը սաւառնի միշտ մեր սրբաբաններու երգեհոներուն վրայ: Իր երաժշտութիւնը ստացած է նոր կանոններ, լայն ոգիով մը տոգորուն, ու պատշաճեցուած մեր ժամանակին, Պիոս Ժ. ի Motu Proprios-ն զոնգակով 1903ին: Այս պապը կ'ըսէր Դամիլ Պէլլէկին. «Ես կ'ուզեմ որ իմ ժողովուրդս աղօթէ գեղեցկութեան վրայ»:

Գեղեցկութիւն է, զոր մենք կը պահանջենք մեր եկեղեցական երգերէն, և զոր մենք հոն կը գտնենք, երբ անոնք հաւատարիմ են այն ոգիին որ զանոնք ստեղծած է:

Գերմանացի բանաստեղծ Շիլլէր զայն հաստատած է: «Այն եկեղեցին, որ գիտնաւ, զրած է ան, խոյս կուտայ ամէն բանէ որ կը հրապուրէ զգայարանքները... բայց, առաջին անգամ որ ես կաթօլիկ եկեղեցի մը մտայ, և երկնային երաժշտութիւնը իջաւ վերնատունէն, երբ սուրբերու պատկերները ժայթքեցին պատերէն և կամարներէն, ու երբ բոլորը, ինչ որ կար, մեծ և օգուտ



## ԻՆՉՈՒԼ ԼՈՒՈՒ ԵՍ ԽԱՉ

(ԽԱՉՎԵՐԱՅԻ ՏՕՆԻՆ ԱՌԹՈՒԻ)

Ինչո՞ւ լուռ ես խաչ. ուր որ քեզի կը հանդիպիմ տխուր և սպաւոր ես. ու չեմ խօսիր. դուն որ դարեր շարունակ ներշնչեցիր, լուսաւորեցիր, մխիթարեցիր, առաջնորդեցիր մարդը, և անոր ապաւէնը եղար, լուռ ես այսօր և տխուր: Երբ դուն գեռ կը խօսէիր մարդկութեան, հազարաւորներ քեզմէ ներշնչուած ու մխիթարուած՝ քեզ իրենց տաք արցունքներով կը լուսային: Այսօր դուն ես լացողը կարծես, խաչ փըրկարար:

Այսօր, ինչպէս երէկ, դուն կը կանգնիս մեր եկեղեցիներուն ու խորաններուն վրայ. կաս տակաւին մեր դպրոցներուն ու տուններուն մէջ և մեզմէ շատերը քեզ ունին իրենց կուրծքերուն վրայ, բայց ամէն տեղ լուռ ես դուն:

Սուրբ Աւետարաններուն վրայ ուր քեզ կը համբուրենք, հոն դարձեալ լուռ ես ու չե՛մ խօսիր մեզի, խաչ պատուական:

տափառ երեցաւ և կենդանացաւ իմ աչքերուն, ես յափշտակուեցայ և կարծեցի երկինքի մէջ ըլլալ:»

Երկինքին մէջ կ'երգե՞ն ուրեմն: Այո, կը պատասխանէ մեզի Յայտնութեան զիրքը: Եւ ան մեր առջեւն կ'անցնէ, Արքայու թեան ծառուղիներու մէջ, «իրենց կիթառներու վրայ կիթառողներու» դասեր: Այո՛, կ'ըսէ Սուրբ Սէտիլ՝ սրբազան Երաժշտութեան պաշտպան սրբուհին, և ես կը հաւատամ որ եթէ չերգէին երկինքի մէջ, ան խոյս պիտի տար անկէ, ժամանակ առ ժամանակ, գալ լսելու համար Գօնֆէրանտիայի համերգները: Բայց մենք այդ պաւտիւր պիտի չունենանք, և Պ. Շէլլի պիտի չներանայ ինձի, եթէ ես իրեն ըսեմ որ Արքայութեան դպրաց դասը (psalette) կ'երգէ գեռ ևս աւելի գեղեցիկ քան Նօթր-Տամի գեղեցիկ դպրաց դասը:

Թարգմ.

CHANOINE COUBÉ

Կ. ՍՐԿ. ՄԿՐՏԻՉԵԱՆ

Ինչո՞ւ լուռ ես այսպէս. անո՞ր համար արդեօք որ փոխան սիրոյ և զոհարելու թեան հոգիին որ ուղեցիր ներշնչել մեզի, մենք լեցուած ենք այսօր ատելութեամբ իրարու հանդէպ. տխու՞ր ես ի տես մարդկային թշուառութեան: Ան օրեր կ'ապրինք, ու դուն լուռ ես:

Երբ դուն կը խօսէիր կեանքը տարբեր էր բոլորովին: Անուշ էր աշխարհը՝ անուշ քու խօսքովդ մխիթարուած:

Չեմ խօսիր այսօր, ու մենք անդունդէ անդունդ կը զրուրկինք արիւնոտ մարմիններով ու հոգիներով. փակէ վիճը մեր առջև, խաչ. խօսէ մեզի, ինչպէս խօսեցար դարերով մեր նախահայրերուն: Առաջնորդէ մեզ, ինչպէս առաջնորդեցիր զանոնք, խաղաղեցնելով փոթորիկը որ կը սպառնայ մեր կեանքին նաւը խորտակելու:

Բայց չեմ խօսիր... արդեօք մեզ չե՞ն լսեր, խաչ. մեր աղաղակները մինչև երկինք հասան. ահա ելի է փոթորիկը մեր շուրջ, մենք քեզի կը նայինք խաչ, փըրկութեան համար:

Չեմ պատասխաներ. չեմ խօսիր մեզի, թերեւս պիտի լուռ ես որքան ժամանակ որ մենէ շատերուն համար զարդ մըն ես միայն մեր եկեղեցիներէն դուրս ու ներս, մեր տուններուն և դպրոցներուն մէջ և Աւետարաններուն վրայ. մեր համբոյրներուն՝ որոնք զուրկ են սիրոյ ամէն ջերմութենէ... պիտի լուռ ցորչափ անունով միայն քրիստոնեայ ենք, ու ցորչափ քեզ կը կրենք մեր կուրծքերուն վրայ, բայց տեղ չունիս մեր սրտերէն ներս. պիտի լուռ թերեւս մինչև որ մենք սորվինք քեզի խօսիլ ու մանաւանդ կարող ըլլանք քեզ իմանալ:

Բայց մենք պիտի զգաստանանք, խաչ, ու դուն այն ատեն մեզ պիտի չձգես թշուառութեան մէջ, մեր վիշտերուն հետ առանձին. պիտի խօսիս մեզի ու մենք պիտի լսենք քեզ:

Երուսաղեմ

Կ. ՄԻՀՐԱՆՅԱՆ





ՔԱՆԱՍՏԵՂԵԱԿԱՆ

## Գ Ի Տ Ն Ա Յ Ի Ր . . .

«ՊԸՏԸԼԻԿ» ԻՆ.

Գիտնա՛ր, ի՛նչպէս, լոյսով քաց ներմակ նայուածքդ փրփրուն,  
Թէ ծաղիկներն ըսպիսակ մէկ-մէկ քափի՛ն պիտի վար,  
Մութէն փրքած՝ հոգիէն՝ նիհար ու լուռ խենք ջղուն,  
Թէ ան բացուիլ՝ հոգւոյն չափ ուզեց մասնաւոր սրտերու,

Աստղերու պէս — որ երկչոտ, յաւէտ ծաղկուն հոգիներ —  
Փնտռել իրար ելլէին, մութի՛ն ալ մէջ երազին . . . :

Գիտնա՛ր ի՛նչպէս, քէ եղա՛ւ ներմակ ու լուրջ նայուածքով  
Մէկն որ դըպլէ՛ր մեղմօրէն, ակիփն մէջ աչքերու

Ճառագայթին այդ բեկուող՝ իր երազին չափ սրտում . . . :  
Ու լուրջ՝ ինչպէս սիրն է մեր խորհուրդներուն դէմ կեանքին,  
«Խենք»ը՝ մարդոց նայեցաւ հոգիներուն փակ, լրբուն.  
Մամուռն ամէն սիրտ առեր, քեւաս՝ զօրեղ երազէ . . . :

Ու հեռուէ՛ն — խենք հոգի — սիրն իր քակեց իր սէրէն . . .  
Անգութ՝ մարդերը եղան իր սրտութեանը հըպարտ,  
Եւ չուզեցին հասկընալ: Ու գիտնայի՛ր եթէ դուն,  
Դժուար՝ նայուածք մ'իսկ՝ բանա՛ր խորունկ ըղձանքը հոգւոյն . . . :

Ու գիտնայի՛ր ալ՝ միմա՛կ, սրտում երազն է դժուար . . . :

ՇԷՆ - ՄԱՀ

Հոկտեմբեր 1942





## ՈՒ ՇԱՏԵՐՈՒՆ՝ ԶԸՐԱՑՈՒԱԾ...

ՃԵՐՄԱԿ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ

Ու մերք օտար աչքերուն նառագայթները այնպէ՛ս  
 Ինձ քրտեցան ընտանի — քափանցեցին ինձմէ ներս,  
 Որ հրնուանփէս զօրաւոր, ես հոգիին փակեցի  
 Գուռը ամուր, որ չըլլայ քէ հովերէն ան սարսի...

Ճառագայթներն այդ ամէն — սրեւ օտար, անյարիր —  
 Գոյներն ինչպէս արեւուն, հասակներով ալ տարբեր,  
 Ես հոգիին լուսաւոր հոսանուսին յանձնեցի...  
 Ամէնքն այնպէ՛ս այլակերպ, ներմակ-ներմակ ծաղկեցան:

Յետոյ զանոնք հանելով իմ երազած հոգիին  
 Յորդ, քափանցուն ալ Լոյսին, ես նըսեցայ անոնց դէմ,  
 Ժամեր այսպէս հիացած անոնց պայծառ տեսիլէն:  
 Ու ծաղկեցան ինձմէ ներս, օտար սրեւն այդ ամէն...:

Գիտե՛մ, լրուելն է դժուար, սիրուածներուն դէմ հոգւոյն...:  
 Բայց ես իմ մէջքս այնպէ՛ս փաղցր սրտով մ'ապրեցայ  
 Աղուորութիւնը անոնց... որ միշտ ներմակ մընային՝  
 Հեռուէ նեո՞ւ, չըբացուած, զիրար Լոյսին մէջ գրկած...:

Ու շատերուն՝ չըբացուած, պիտի այսպէս անցնիմ ես...:

Հոկտեմբեր 1942

Ա.Ն.ԵԼ





## ԻՐԿՈՒՆԻՆ ՆԵՏ



(3 + 4 + 3)

Իրկունն է՝ մեղրի ցովեր կը ցանէ.  
Ծառերէ կը կախուի բոց՝ բիւրեղէ,  
Ու ոսկին, զըմրոխտ ժըպիտը լոյսին...

Դոյներու պարտէզ ուրախ՝ իմ հոգին:

Ու ծըփուն վինը հովուն, իրերուն,  
Սարսուռն հոգին տափուկ ձայներուն,  
Ծիծաղին բոժը կապոյտ հասակին՝

Մըսերիմ՝ երգեր՝ հըրհուանք իմ սրտին:

Բոյրերու իրկունն ինչպէս երգեհոն,  
Իդան աղու ծաղիկներու կեանքը հոն.  
Ու պոյտ պոյտ ներշնչումով մը հեծին

Ըսես քէ տակաւ կ'անցնիմ սարսուղին:

Ու այսպէս, խառնաւ, բուրեան, երգ մ'ինչպէս,  
Սրտի պէս կը հասնի Պահը անտես...  
Ու հոգիս իրերուն մէջ կը հալի...

— Օ, իրկո՛ւն, եղար ինծի բոյր հոգի...:

Հոկտեմբեր 1942

ՅՍ.ԻՍ.Կ





## ԻՐԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

### ՃԱՆԱԶՈՒՄԸ

#### 1. ԼՈՅՍ ԵՒ ՍՏՈՒՆԵՐ

Միակ ճշմարտութիւն մը կայ որ կը թափանցէ բոլոր մտքերուն մէջ, թէ և անոնց մէջ կ'ստանայ ամենատարբեր ձեւերը. ինչպէս որ միակ լոյս մը կայ որ կը լուսաւորէ բոլոր նայուածքները թէ և ասոնցմէ ոչ մէկը կ'ընդունի նոյն ճառագայթները: Նման լոյսին՝ իմացականութիւնը մեզ գտնել կուտայ ամէն ինչ որ է. ան զանոնք դուրս քաշելով խաւարէն՝ կը թուի ստեղծել զանոնք. — լոյսը ընդ առաջ կ'երթայ նայուածքին իբր ինքզինք անոր ընծայելու. բայց հարկ է որ նայուածքը իր կարգին զիմաւորէ զինքը՝ զինքը ընդունելու համար: Ինչպէս որ լոյսը կազմուած է գոյներու խորձէ մը, այնպէս ալ իմացականութիւնը կազմուած է յոյզերու խորձէ մը, և զտագոյն իմացականութիւնը այն է որ իր մէջ կը ձուլէ ամենամեծ թիւը յոյզերու առանց որ ասոնցմէ ոչ մէկուն թոյլ տայ երևիլ:

Լոյսը իրերուն սկզբունքն է. եւ իր ստուերն է որ կը ծագայէ ստեղծելու ամէն ինչ որ կայ: Իր ստուերին մէջն է միայն որ մենք կրնանք ապրիլ: Մենք կը զիտենք բոլոր առարկաները լոյսի մը մէջ որ արեգակէն կուգայ և ոչ թէ մեզմէ: Ու մենք զանոնք կը տեսնենք կէս պայծառութեան մը մէջ իբրեւ ստուերի և լոյսի խառնուրդ մը: Ստուերը ուրիշն անբաժան է լոյսէն, մտերիմ է, զաղտնի ու պաշտպանող: Ստուերին միջոցաւ է որ լոյսը կը պաշտպանէ նայուածքը իր փայլին դէմ, ինչպէս զգայութեան միջոցաւ է որ ճշմարտութիւնը կը պաշտպանէ հոգին իր սրագոյն ծայրին դէմ:

Մարդ կը կուրծայ երբ կը զիտէ արեգակը ինչպէս երբ կը զիտէ զուտ միտքը. կրնանք տեսնել միայն անթիւ մարմինները որ այլազանօրէն կը ցոլացնեն և կը պահեն լոյսը, ինչպէս կարելի է խորհիլ միայն մասնաւոր զաղափարներ, որոնցմէ իւրաքանչիւրը կ'արտայայտէ մէկը՝ ճշմարտութեան երեսներէն:

Լոյսը նման է Աստուծոյ. զայն չենք

տեսներ, բայց իր մէջ է որ կը տեսնենք ֆնացեալ ամէնը: Անոր մէջ է որ կը ծփայ ամէն ինչ որ կայ. ինքն է որ տեսանելի կը դարձնէ զանոնք: Այսպէս հարկ է որ ճանաչման սկզբունքը ինքը, խուսափի ճանաչումէն: Ինք կրնայ զիտնալ միայն ինչ որ հակադրուած է իրեն: Որովհետեւ լոյսը որ ամէն ինչ կը լուսաւորէ՝ չի կրնար ինք՝ լուսաւորուիլ: Կը բռնենք միայն ստուերին և պայծառութեան պայքարը, այն միջոցը որ կը զատէ ստուերները, լոյսին սահմանները և այսպէս ըսելու համար, աւելի ինչ որ չէ՝ ինք՝ քան թէ ինչ որ է. մարմիններու պաշտօնն է լոյսը ծծել, և միտքերուն՝ տարածել զայն: Ահա ինչու առաջինները կը տեսնուին բայց երկրորդները՝ ոչ: Ու նոյն իսկ, ճշմարիտ լոյսին յատուկ է չտեսնուիլ անոնցմէ որ զինքը ունին: Այդ միտքերը իրենք ալ կը զառնան վառարաններ որոնք ճիշդ ալ կը լուսաւորեն զանոնք որ զուրկ են իրմէ:

Թափանցիկ մտքեր կան որ թոյլ կուտան որ իրենցմէ անցնի բոլոր այն լոյսը որ կ'ստանան իրենք: Ուրիշ միտքեր, նման հայելիներու զայն ամբողջովին կը ցոլացնեն իրենց շուրջը, ուրիշներ՝ որ նման անթափանց մարմիններու, կը թաղեն զայն իրենց իսկ մթութեանը մէջ: Իւրաքանչիւր միտք կը փնտռէ, անոր մէջ բնակելու համար, լոյսի այն գոտին որ իրեն կը յարմարի. քիչ միտքեր կան որոնք կարենան տոկալ զուտ լոյսին. ոմանց հաճոյ են լոյսի և պայծառութեան ամենաբուռն հակադրութիւնները. ուրիշներ կը նախընտրեն կիսաստուերը կամ սփռու պայծառութիւնը:

#### 2. ՆԱԳՈՒՍԻՐԸ

Հայելիներու մէջ տեսնուած պատկերներուն զեղեցկութիւնը չի զար իրենց ցոլացուցած առարկաներուն զեղեցկութենէն ալ իրենց մակերեսին կատարելութենէն և մաքրութենէն: Մակերեսի նուազագոյն անհարթութիւնը, փոքրագոյն փոշին կը բաւեն ձեւազեղելու, հալման, անճանաչելի դարձնելու պատկերը: Հայելին նման է նայուածքի մը: Այն նայուածքները որոնք ամենէն շատ պայծառութիւն և խորութիւն ունին անոնք են որ ամենէն շատ լոյս կ'ընդունին և կը դարձնեն: Ու ալ չենք զիտեր թէ այդ լոյսը իրենց իսկ խորքէն կուգայ



թէ կը բաւականանան զայն ստանալով, ինչպէս հայելիները՝ անոնք մեզի կ'ընծայեն փոխն ի փոխ իրականութեան ամենափոփոխական կերպարանքները իրենց անտեսանելի ներկայութեան մէջէն, ու այդ անցաւոր պատկերներէն չեն աւրուիր իրենք երբեք, անոնցմէ սեւ է հեաք չեն պահեր: Զուտ նայուածքը վերջապէս, իրականութենէն կը բռնէ միայն զազաւորութեան գոյներ զորս ձեռքը անկարող է բռնել, ինչպէս հայելին առարկաները կը ներկայացնէ իր ետեւ տեղ մը ուրկէ իրենց գոյութիւնը խոյս է տուած:

Արտեանունքներու ազատ շարժումին մէջ կամաւոր ուշադրութեան մէկ պատկերը կայ: Որովհետեւ մեզի՝ կը պատկանի բանալ մեր աչքերը կամ գոցել զանոնք, բայց ոչ ստեղծել այն տեսարանը որ իրենց կ'ընծայուի:

Նայուածքը չէ որ ծնունդ կուտայ լոյսին: Ինք զայն կ'ընդունի միայն: Նոյնպէս ալ իմացականութեան ամենահատարեալ գործը զուտ ուշադրութեան գործ մըն է միայն: Բայց տեսողութիւնը նայուածքին հրճուանքն է. երբ կը տեսնէ, նայուածքը կը կորսնցնէ իր անկախութիւնը ու կը թուի ջնջուիլ, որովհետեւ ինք իր առարկային հետ կը նոյնանայ այլևս:

Ինչպէս աչքը՝ միտքը իր բիրտ ունի, որ պարտի թոյլ տալ լոյսին որ մտնէ և որ կը նեղնայ այն չափով որով լոյսը զօրաւոր կը դառնայ: Անմիջապէս որ իրեն ճամբայ կը տրուի, լոյսը կը թափանցէ ամենուրեք ինչպէս ջուրը: Բայց մեր անձնասիրութիւնը անդադար նորանոր արգելքներ կը հակադրէ իրեն: Ուշադրութեան պաշտօնն է վերցնել արգելքը: Բացուածքէն, անմիջապէս, լոյսը կ'ողողէ զմեզ:

Լոյսը ցոլացնելուն համար է որ նայուածքը ինքն իսկ լուսաւոր կը թուի: Նոյնքան դժուար է սեւեռել նայուածքը որքան փայլը լոյսին: Եւ սակայն չի կայ աւելի պարզ ու աւելի խորաթափանց ճանթութիւն քան այն՝ որ կ'իրագործուի նայուածքներու հանդիպումով. աչքերը կը յայտնարիւրեն ըզձանքին ուղղութիւնը. այն խանդը որով ան տէր կը դառնայ առարկաներուն որ կ'ընծայուին իրեն, ակնթարթի մը հանդիպումովը աչքերը կը յանձնեն էութիւնը կամ կը մերժեն զայն:

### 3. ՏԵՍԱՆԵԼԻՔԸ ԵՒ ԼՍԵԼԻՔԸ

Եթէ ճանաչումը կը զատորոշուի իրականութենէն և սակայն կ'ենթադրէ զայն և կը նմանցնէ, կարելի է զինքը ճշտիւ բազմաթիւ պատկերին զոր հայելին կը ցոլացնէ, կամ ձայնին՝ զոր արձագանգը կը կրկնէ: Տեսանելի առարկայ մը մթին զանգուած մըն է միայն մինչև այն պահը, երբ այն ճառագայթը որ իրեն հպած է կը հպի կենդանի աչքի մը որ զայն կը պարկեպէ իր հորիզոնի շրջանակին մէջ: Զայն մը մըթնոլորտի թրթռացում մըն է միայն մինչև այն պահը ուր կը հանդիպի ականջի մը որ զինքը կը բռնէ և կը վերաբառադրէ իր խորհրդաւոր կոնքին մէջ: Տեսանելիքը և լսելիքը ճանաչման զգայարանքներն են. անոնք դարձած են դէպի տիեզերքը որ մեզ կը շրջապատէ և զայն կը լցնեն պատկերներով և արձագանգներով: Մին աշխարհը տեսանելի կը դարձնէ բայց այնքան զազանի տեսարանով մը որ միակ էակ մը կարող է զայն տեսնել. միւսը՝ աշխարհը հնչեղ կը դարձնէ բայց այնքան ներքին հպումով մը որ միակ էակ մը կարող է զայն լսել:

Շօշափելիքը մարմնական տիրացում մը կուտայ մեզի աշխարհէն, ան մինչև առարկան կը տարածէ այն տիրութիւնը որ մենք ունինք մեր իսկ մարմնին: Բայց տեսանելիքին միջոցաւ աշխարհին տիրակալութիւնը աւելի իմացական է, աւելի անչափախնդիր ու աւելի կոտորեալ: Պէտք է որ առարկան հեռանայ ինձմէ որպէսզի զուրս գայ խաւարէն և երեսնայ լոյսին մէջ. այն ատեն փոխանակ անոր ներկայութիւնը զգալու միայն, զայն կ'ընդգրկեմ իրիւս նկար մը, կ'ըմբռնեմ իր շրջագիծը և գոյնը, կը զատորոշեմ իր տարրերուն նուրբ յարաբերութիւնները ու այն տեղը զոր կը զրաւէ աշխարհին մէջ: Զեռքս ի գուր ըստ կամս շօշափած էր զայն մութին մէջ. Տեսանելիքը այն պահուն ուր կը ցոլցնէ զայն ինձի, իր յայտնութիւնն իսկ կ'ընէ ինձի: Այն ատեն զուտ հայեցողութեան առարկայ մը կը դառնայ ան: Որովհետեւ տեսանելիքը կը կիրարկուի նիւթական աշխարհին, բայց անոր ոգեկան դիմագիծ մը կուտայ: Պատկեր մը միայն կը բռնէ անկէ որ պատրանքի մը կը նմանի եթէ շօշափելիքը չհաստատէ զայն: Բայց տեսանելիքը մեզի կ'ընծայէ



մէկ անգամէն մասերը աշխարհին որոնց փոխնի փոխ միայն հանդիպիլ պիտի թոյլատրէր շարժումը: Տեսանելիքով է միայն որ աշխարհը մեծ է: Ան միայն մեզի զբաղեցնել կուտայ երկինքը: Տեսանելի տիեզերքը անշարժ և լռին վեհութիւն մը ունի. եւ այն շարժումները զորս մեզի կը ցուցնէ՝ երբ ձայնը քաշուի անոնցմէ, մտածման ակտերու կը նմանին:

Լսելիքը ընդհակառակը կը նշէ բոլոր թրթռացումները որ մարմինները կը կրեն. պատգամներ են զորս ասոնք մեզի կ'ուզուեն: Լուսաւորուած առարկան զուրէն կը ստանայ լոյսին ազդեցութիւնը. բայց ձայնը կը թուի հնազանդիլ ներքին մղումի մը, ինչպէս ցոյց կուտայ մարդկային ձայնը: Բառը արտաբերելով հոգի մը կուտանք իրեն: Լոյսը մեզի կը յայտնաբերէ աշխարհը. Բանն է որ ստեղծած է զինքը: Տեսանելիքը աւելի մեզ բնութեան հետ հաղորդակից կը դարձնէ, լսելիքը՝ մարդուն հետ: Ու մարդկային ձայնին զրոշմը նուազ հարուստ է քան մարդկային զիմազիծը բայց խորագոյնս կը յուզէ զմեզ: Տեսնելը, գտնել է արարչութեան գործը, լսելը՝ տեսակ մը մտերմութիւն ունենալ է Արարիչին հետ:

#### 4. ԻՄԱՍՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽԱՆԴԷ

Իմացականութեան խանդը ամբողջ էութեան մէկ խանդն է, ան կը պայմանաւորուի զգայարաններուն խանդովը. այս վերջինը, ճիշտ է որ կրնայ վտանգել իմացականութիւնը զայն շեղեցնելով և կուրացնելով. կը պատահի որ ընկճէ զայն: Բայց առանց զգայարաններու խանդին իմացականութիւնը կը թունայ. պէտք ունի ան այն հուրին որ զինքը կը վերականգնանցնէ և զոր ինք ալ վառ կը պահէ միշտ: Զգայարաններուն մէջ թափանցման զօրութիւն մը կայ, որուն վերջին ծայրը կը սրուի միշտ իմացականութենէն: Խնդիրը հետեւաբար յաղթել է զգայարաններուն, այլ ծառայեցնել զանոնք իմացականութեան շարժման՝ ո՛ր միայն կրնայ անոնց տալ ճշմարիտ խաղաղեցում մը: Ամէն ճանաչում կը նրբացնէ և կը զտէ որոշ զգայարանքի մը գործողութիւնը. և իմացականութիւնը չի ջնջեր զգայութիւնը, այլ կը կատարելագործէ զայն և կ'աւարտէ: Բոցը որ սնած է ամենաանմաքուր նիւթե-

րէն կրնայ աւարտիլ զոտ լոյսի լեզուակով մը: Կեանքը գոհացուած և վերածնող ըլլած քններու մեծ շարժում մըն է. պէտք է որ այդ ըլլած քնները զիրար վեր բռնեն, փոխանակ իրարու դէմ մարտնչելու, եւ ամենաանկատարները անոնց, որ յաճախ սաստկագոյններն են՝ մեզի կ'ընձեռեն զօրութիւն մը որուն գործածութիւնը մեզի կը մնայ բարձրացնել:

Կէօթէ կ'ըսէր. «Երբ իրերուն մասին չենք խօսիր սիրով լեցուն յուզմամբ մը, ինչ որ կ'ըսենք շարժեր որ յիշատակուի», Տիկին տիւ Տըֆֆան, աւելի կրակով կ'ըսէր. «Օ՛ն, օ՛ն, միայն կիրքերը կան որ մտածել կուտան»:

Այն որ իր մէջ չէ զգացած երբեք զգայական ըլլած քնի խթանը միշտ ալ զուրս կը մնայ իր գիտցածէն. ան անգիտակ է այն փափկութիւններուն, ամօթխածութեան, կանխազգուշութիւններուն զորս ունի ծանօթութիւնը փնտռողը երբ միշտ կուտան բարձրագոյն հրճուանքը կը զնէ այն անձկազին սպասումին մէջ որ այդ մեղմութիւնը ինքը վերջ գտնէ: Եւ իմացականութիւնը իրեն հնարամիտ միջոցներ միայն կը հայթայթէ. որովհետեւ իմացականութիւնը չի կրնար տեսնել ճշմարտութիւնը առանց որ հոգին զգածուի:

Իրականին հետ շփումը կը յուզէ միշտ մեր էութեան մտերմագոյն մասը. կը բաւէ որ այս վերջինը խուլ մնայ որպէսզի բնութիւնը երևի ձայներէ զուրկ: Պէտք է ընդ առաջ երթալ իրերուն՝ մտածման և սիրոյ ամբողջ գործելութեամբը. խորհիլ ու սիրել, գտնել է մեր ներկայութիւնը աշխարհի մէջ, զգալ և իրագործել է ընդ մէջ մեր ու աշխարհին գերբնական միութիւն մը: Ծանաչումը չի կրնար ուրեմն անջատուիլ ըլլած քնէն. ճանաչումը միացման ըլլած քն մըն է էութեան ամբողջին հետ նոյնիսկ: Բայց իմացականութեան և իր առարկային միջև տեսակ մը փոխադարձ կապ կայ: Ուստի՝ առարկան կը թուի զիմեւ դէպի իմացականութիւնը որ կ'ընդունի զինքը իր մէջ և կը շուրջպատէ լոյսով: Առարկան չգաղ-րիր ինքզինք ընծայաբերելէ իմացականութեան, կը բաւէ որ իր կարգին ինքը բազմալի ըլլայ անոր:

LOUIS LAVELLE

«La Conscience de Soi».



## ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՐՅՆԵՐ

### ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ԵՏՔԸ

#### ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱԿԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ ԱՄԲՈՂՁԱՎԱՐ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆՅ

2. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱԿԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԻՈՅ ՄԵՋ

Բրոֆ. Թիթլինօֆ, «Կենդանի եկեղեցի» շարժման առաջնակարգ տեսարաններէն մին, իր «Նոր եկեղեցի» անունը դրքին մէջ, «Կենդանի եկեղեցի» շարժման նախահայրերը կ'ուզէ տեսնել Ռուս գրական մեծ գէմքերու՝ Սլավոֆիլի, Դոստոյովսկիի եւ Թոլսթոյի մօտ, նաեւ Ռուս Սինոդի ազատական անդամներու մէջ՝ որոնք Բեթրուկրատի մէջ հիմնեցին «Կրօնական Փիլիսոփայական Ընկերութիւնը»։ Բայց սիրամարդի փետուրները, ընդհանրապէս ազուաւի հասակին չեն յարմարիր. ի՞նչ հասարակաց գետին կրնայ գոյութիւն ունենալ Սլավոֆիլի ազգային ոգիի ընկերակցութեան եւ Կենդանի եկեղեցիի քահանայական սակաւապետութեան միջեւ. Դոստոյովսկի յամառ խարանդը եղած է իր վէպերուն մէջ նմանօրինակ կրօնական ակտաւարակ հոգեբանութեամբ մեծցած ու սնած հաւատաքննիչներու. իսկ Թոլսթոյ իր ընկերային-լիմաստասիրական, պետական, կրօնական հասկացողութեամբ հասարակաց ոչինչ ունի Կենդանի եկեղեցիի շարժման ոգիին ու գաղափարաբանութեան հետ. միւս կողմէ «Կրօնական Փիլիսոփայական Ընկերութեան» մեծագոյն գէմքերը, Մետրապօլիտ Սերգիոս, Պրատիւէվ, Պուլկազով, Գարթաշէֆ, ոչ միայն չեն պատկանիր «Կենդանի եկեղեցի» ականներու խմբակին, այլ անոր հակառակօրդներուն առաջին շարքին վրայ կը կենան։

Արդ, ո՞ւր է այս շարժման աղբիւրը, եթէ ան չունի գաղափարական, աստուածաբանական հիմք մը, գետին մը. դասակարգային գործնական շահը եկեղեցականներու մէկ կողմէ, Պուլխիլովի կրօնական

դէպի աւելի ազատ գործունէութեան ներողամիտ քաղաքականութեան փոփոխութիւնը, միւս կողմէ, ստեղծեցին Կենդանի եկեղեցին։

Կրօնական այս նոր շարժման գաղափարաբանութիւնը, ինչպէս նմանօրինակ կրօնական դէպքերու նախատեսութեամբ ըսած է Կարլ Մարքս, գաղափարական մակառութեամբ (super-structure) մըն է, որը վայրկեանի գործնական շահու թելադրութեամբ կը փոխուի։

Կենդանի եկեղեցին քանակաբանութեամբ լիափոխութիւն մըն էր ամէն բանէ առաջ. գործածելով Ս. Դրական կանոնական բացատրութիւնը՝ երիցական հերձուած մը, որ կը յաւակնէր իր վարչութեան ու ղեկավարութեան տակ առնել Ռուս Օրթոտոքս եկեղեցիի վերին իշխանութիւնը, բռնի, յեղափոխական միջոցներով ու մեթոտներով, խլելով զայն կուսակրօն եկեղեցականութեան ձեռքէն. Այդ շարժման ղեկավարները եղան Բեթրուկրատի «հպարտ քահանաները»։ Բեթրուկրատեան ամուսնացեալ կղերականութիւնը, չատ հինէն, մասնաշատուկ, առանձնաշնորհեալ զիրք ունէր Ռուս եկեղեցականութեան շարքերուն եւ Ռուս Օրթոտոքս եկեղեցիի մէջ. այդ եկեղեցականութիւնը կը կազմուէր Ռուս աստուածաբանական ակադեմիաներու էն օժտեալ եւ կարող աշակերտներով, որոնք իրենց բարձր կրթութեամբ, գիտութեամբ, կենցաղավարութեամբ, ազգեցութեան լայն շրջանակներ ունէին արքունիքի մէջ, մինչ այժմ, քաղաքական դէպքերու այլ կերպ դասաւորումով, անոնք այդ յարաբերութիւնը կը մշակէին Աշխատանքի շարժման առաջնորդներուն հետ։ Առաժի կարգ անցած էր Ռուսիոյ մէջ եկեղեցականներու մօտ սա ասացուածքը. «մի՛ վախճար պալատական կեանքէ եւ աղնուականներէ, այլ զգուշացիր Բեթրուկրատեան եկեղեցականութենէ, որը Ռուս կղերականութեան պահակ-գորագունդն է»։ Եւ այդ Բեթրուկրատեան եկեղեցականութիւնը յեղափոխութեան մէջ էր։ Ուրիշ խօսքով, ձեռմակ եկեղեցականութեան մէջ նուիրականացած բանաձեւը — ամուսնացեալ քահանայութիւնը՝ պայքարի մէջ էր Սեւ եկեղեցականութեան — անոնց գործածած եղբր — փանակա-



նութեան հետ(\*). Ռուս ամուսնացեալ քահանայութիւնը — ձերմակ եկեղեցականութիւնը — փառաօրհակա՛ն տխուր շարժառիթներէ առաջնորդուած բոնկեցուց աշդ յեղափոխութիւնը, վանական, կուսակրօն եկեղեցականութեան դէմ որը «միայն իր կուսակրօն ըլլալու հանգամանքով» կը տիրանայ եկեղեցւոյ բարձրագոյն վարչութեան, նուիրապետութեան վերին աստիճաններու: Արդարեւ, Արեւելեան բոլոր եկեղեցիներուն համար, եկեղեցւոյ նուիրապետական աստիճանները փակ են ամուսնացեալ քահանաներու առջև. նոյն ըմբռնումը ունի նաեւ կաթօլիկ եկեղեցին. կուսակրօն եկեղեցականութիւնն է տէրն ու տիրականը եկեղեցիին. հարց մըն է ասիկա բաւական կնճռոտ ու կենսական՝ եկեղեցիին համար. ինչո՞ւ համար, կը մտածէին ոմանք, ամուսնացեալ քահանայութիւնը զոյգ պիտի դառնէր իր առջև եկեղեցւոյ ծառայութեան վերին ասպարէզները. ամուսնութիւնը արգելք է այդ բարձրացման համար. Բեթրուկըրատեան ամուսնացեալ քահանայութիւնը ուղեց վերցնել այդ արգելքը և հարթել եպիսկոպոսութեան տանող ճամբան, մէջտեղէն վերցնելով «Սեւ եկեղեցականութիւնը»(\*\*):

Բեթրուկրատեան քահանայութիւնը շատ կանուխէն կը սնուցանէր այդ ձգտումը, և

(\*) Որքան յատկանշական՝ նոյնքան բարացուցական է «Կենդանի եկեղեցի» շարժման հեռուոր մէկ արձագանգը Հայաստանի մէջ՝ Ազատ եկեղեցիի բերնով, որ աշակերտի իր փութկոտութեան ու ժրջանութեան մէջ կը կրկնէր իր վարժապետէն սորվածները՝ «Ազատ եկեղեցին նպատակ է դրել տապալել կուսակրօն հոգեւորականութիւնը» (1925 Մայիս Թիւ 17-19, էջ 286). «մի անգամ ընդ միշտ անցած է կուսակրօն եկեղեցականութեան ժամանակը» (նոյն տեղ). «կուսակրօն եկեղեցականութիւնը անախրոնիզմ — ժամանակավրէպ — է» (1928 Թիւ 1-2, էջ 5). Կասկածէ վեր է անշուշտ, Կենդանի եկեղեցիի և Ազատ եկեղեցիի հոգեւոր եղբայրութեան կայրը և հետապնդած նպատակը, մին Ռուսիոյ սահմաններէն ներս, միւսը Հայաստանի մէջ. այժմ տեղը չէ հոս դատաստանը ընելու ինքնին արդէն ժամանակավրէպ այդ շարժման որ պատմութեան կը պատկանի այլևս. պիտի անդադրա՛նանք այդ շարժման, իր ատենին, երբ Հայ եկեղեցւոյ և Պետութեան յարաբերութեան խնդրին հասնինք:

(\*\*) Կը յիշեն թերեւս ընթերցողներ թէ, մեր մէջ ևս, Հայաստանէն դուրս, գաղութներու մէջ, ձեռնարկներ եղան Բաղնաճնքու եպիսկոպոսացման. պիտի անդադրա՛նանք նաեւ այդ հարցին, իր կարգին:

Կ'աշխատէր օրինակաւ միջոցներով անոր հասնիլ, եկեղեցին քրիստոնէական նախնական ըմբռնումով վերականուցանելու մտածութեամբ. բայց անոնց ակնկալութիւնները ձախողեցան, մինչև 1923, երբ դեռիւնը պատրաստ նկատուեցաւ յեղափոխութեան, իրականացնելու համար դարերէ ի վեր երազուած տեսակէտներն ու ձրգտումները: Սովիէդ իշխանութիւնը քաջալերեց, չոյեց Կենդանի եկեղեցիի առաջնորդներուն փառասիրութիւնը. վասնզի ան մեծապէս կը հետաքրքրուէր կրօնական հարցով ու տարիներու փորձառութիւնը, ու կրօնական հալածանքի քաղաքականութիւնը եկեր էին հաստատուել թէ Պոլշեւիզմը վերաքննութեան և վերստուգման պէտք էր ենթարկէր իր կրօնական քաղաքականութիւնը. Պետական հալածանքը չէր տկարացուցած եկեղեցին. «արիւն մարտիրոսաց սերմն եկեղեցւոյն» ամէն ժամանակներու համար ճիշտ կրնար ըլլալ. Պետութիւնը փոխեց իր քաղաքականութիւնը «ո՛չ հալածել, ո՛չ պաշտպանել»: Բեթրուկրատեան քահանայութեան իր փառասիրական ձգտումներու իրականացման համար, կառավարութիւնը իր աջակցութիւնը խոստացաւ:

Քանի մը խօսք ևս Կենդանի եկեղեցիի վարչական կազմակերպութեան մասին. ինչպէս ըսուեցաւ, քահանայական հերձուած մըն է ան, ենթակայ Սովիէդ իշխանութեան. եպիսկոպոսներ և աշխարհականներ երկրորդական տեղ կը դրաւեն եկեղեցւոյ վարչական կեանքին մէջ. եկեղեցւոյ վարչութիւնը քանի մը քահանաներու ձեռքն է, որ բացառաբար իր մէջ կ'առնէ քանի մը եպիսկոպոսներ, քահանայական ձեռնադրութիւնները ապահովելու համար. Կենդանի եկեղեցին հակառակ է պատրիարքութեան, վասնզի ան կը խորհրդանշէ եւ կը զլխաւորէ եպիսկոպոսութիւնը. Կենդանի եկեղեցին հակառակ է վանքերու եւ վանականութեան, ուր կը մեծնային Օրթոտոքսութեան մեծազոյն պաշտպաններն ու գէմքերը: Աշխարհականները ունէ տեղ չունին անոր Գերագոյն Խորհուրդին — Սինոդին — մէջ. Կենդանի եկեղեցին կը կասկածի աշխարհականներէ և կը վախնայ անոնց ազդեցութենէն եկեղեցական գործերու միջամտութեան տեսակէտէն: Կենդանի



Եկեղեցին կ'աշխատի «Սև եկեղեցականներու» ձեռքէն առնել եպիսկոպոսութիւնը. անոր վարչութեան մէջ եպիսկոպոսութիւնը պատուոյ ներկայացուցչութիւն մըն է քան եկեղեցւոյ վերին վարչութիւնը. այս նոր հեղինակութեան հիմնական թեզը հետզհետէ հաստատուեցաւ, իշխանութիւնը եպիսկոպոսներէ անցաւ քահանաներու ձեռքը, Բանաստեղծական եւ ո՛չ եպիսկոպոսական սկզբունքը օրդեգրուեցաւ, ու այս սկզբունքի առաջնորդութեան տակ, եկեղեցական կեանքի վերաբերեալ ամէն գործ անցաւ քահանաներու ձեռքը: Այսպէսով Կենդանի եկեղեցին, քահանաներու դատակարարային կազմակերպութիւն մը եղաւ, զոր ի գլխաւոր հեղինաբար Բանաստեղծական trust կը կոչէ:

Բրոֆ. Թիթլինոֆ, Կենդանի եկեղեցիի նպատակներու մասին խօսելով կը գրէ. «Կենդանի եկեղեցիի նպատակն է ամեն բանէ առաջ, եկեղեցական կեանքը ձեռքադառնել վանական ազդեցութենէ և եկեղեցւոյ վարչութիւնը դնել ձերմակ եկեղեցականութեան ձեռքը, ձերմակ եկեղեցականութեան զերագահութեամբ և անսահման հեղինակութեամբ»: «Կենդանի եկեղեցիի կառավարութեան հանդէպ հաւատարմութեան քաղաքականութիւնը բանաւոր պատճառներ ունի», կը գրէր ուրիշ տեղ մը Բրոֆ. Թիթլինոֆ. «այդ քաղաքականութիւնը սակայն ծանօթ էր կառավարութեան, որ կասկածելի կը գտնէր իշխանութեան հանդէպ Կենդանի եկեղեցիի կեցուածքը, և ջիւղատանի մէջ զործող յայտնի համայնավարի մը բերնով կը գրէր. «անոնք — Կենդանի եկեղեցիի պատկանողներ — այժմ կ'երկրպագեն մեր առջև, հաւատարմութեան և հնազանդութեան իրենց ամենախոնարհ զգացումները կը յայտնեն մեզի, բայց երբ Պուլշեիզմի համար քրիտիքական մոմէնտը գայ, անոնք առաջիններէն պիտի ըլլան իշխանութեան ու մեզի դէմ ելլողներէն. ո՞ւր էին անոնք հինգ տարիներէ ի վեր, երբ Պուլշեիզմը իր կենաց ու մահու պայքարը կը մղէր իր թշնամիներուն հետ, ներքին ու արտաքին ճակատներու վրայ, մինչ այժմ մեզի հետ ըլլալ կը յաւակնին երբ տեսան թէ Պուլշեիզմը յաղթանակած է»: «Կենդանի եկեղեցին, կը գրէր Սովիէզ Բրոքականտի Գործակալութիւնը, կը յայտարարէ թէ ինք կը պայքարի մեզի հետ

կապիտալիզմի և մեր թշնամիին դէմ. կ'ըսէ թէ իր ջանքերը կը միացնէ մեր աշխատանքի ջանքերուն և ֆեդափոխական Կառավարութեան կողքին է ինք, բարեկամը գործաւորներու և գիւղացիներու դատին: զեզեցիկ և յուզիչ խօսքեր արդարեւ և այնքան զբաւիչ նախադասութիւններ որ իրապէս նուազ փորձառու ու միամիտ գործաւորներ ու գիւղացիներ կրնան հաւատալ թէ կոմիւնիստները քահանայական զգեստ հագած են և կոմիւնիզմ կը քարոզեն եկեղեցւոյ բեմերէն. բայց, ի՞նչպէս կ'ըլլայ որ երեկուսան հակա-յեզափոխականները, այսօր այսպիսի յեզափոխական յայտարարութիւններ կ'ընեն. կը թուի ուրեմն թէ, այս յեզափոխական գիմակը անոնք երեսին անցուցած են փրկելու համար իրենց անձնական մօրթերը և ապահովելու իրենց նիւթական շահերը»:

Այսպէս, քահանաներու դատակարարային շահը եղաւ այն առանցքը, որու շուրջ զարձաւ Կենդանի եկեղեցիի կեանքն ու զործունէութիւնը. ամէն ինչ ներքին էր երբ ան կ'առաջնորդէր այդ առանցքին: Անոնցմէ ոմանք նահանջեցին, ուրիշներ վերադարձան եկեղեցւոյ զիրկը, բայց բոլոր այս փոփոխութիւններու մէջ, անոնք, այդ քահանաները, հաւատարիմ մնացին ինքզինքնուն և իրենց քահանայական դատակարարային տխուր փառասիրութեանց:

Բրոֆ. Թիթլինոֆ, Կենդանի եկեղեցիի շարժումը հաշուեյարդարի ենթարկելով Կենդանի եկեղեցիի պաշտօնաթիւրքին մէջ կը հարցնէր՝ «քրիստոնեայ աշխարհին համար ի՞նչ ըրաւ ան — ձախողելէ յետոյ ռուսական մայր հողի վրայ, — ամէն բան, բայց այդ «ամէն բան»ը ոչինչ առաջ բերաւ, որովհետեւ ժողովուրդը չհետեւեցաւ իր առաջնորդներուն»: Մեթոսական James Cannon եպիսկոպոսը «Եկեղեցական կեանք Մոսկուայի մէջ» գրքով կը գրէր. «Կենդանի եկեղեցին ինքն իր մէջ պառակտելով, քայքայուեցաւ, հակառակ կառավարութեան զայն փրկելու ջանքերուն, վասնզի Ռուսերու մեծամասնութիւնը հաւատարիմ մնաց Պատրիարքի եկեղեցիին»: Նոյնիսկ, Կենդանի եկեղեցիի փաստաբան Ժիզուիթ D'Herbigny կը գրէր. «Մոսկուայի մէջ մասնաւորաբար, հաւատացեալներու մեծամասնութիւնը Պատրիարքի եկեղեցին



կը յաճախէ. կենդանի եկեղեցիի քահանաները առանց ծուխի և հացի մնացած են»։ Թիխոն Պատրիարք, երբ Information թերթի լրագրողներն հեղինարար կ'ըսէր թէ «Նոր եկեղեցիի առաջնորդները առանց բանակի զօրավարներ են», իրաւունք ունէր։ Անոնցմէ ոմանք իրենց յուսահատութեան մէջ կը հարցնէին յօգուածներով. «արգարե, մեզի համար հօտեր պիտի չըլլա՞ն որ առաջնորդենք», և կ'առաջարկէին պատրիարքին վերադառնալ Մայրենի եկեղեցիին գիրկը։ Իրօֆ. Թիթլինօֆ կը գրէր բացայայտօրէն իր բարեկամներու յուսախաբուծեանց վերջ տալու համար. «եկեղեցականութեան ջախջախիչ մեծամասնութիւնը, նոյնպէս նաեւ թեմեր ոչ միայն չեն ճանչնար Նոր եկեղեցիի վարչութիւնը այլ անոր հակառակ են. մեր գէմ գրգռութիւնը այնքան խոշոր համեմատութեանց հասած է որ այս նոր շարժման առաջնորդներէն ոմանց կեանքը վտանգի տակ է. մեզմէ ոմանք արդէն քարկոծուեցան. թէեւ ոստիկանութիւնը (militia) մեզ իր պաշտպանութեան տակ առած է, բայց մեր եպիսկոպոսները եւ քահանաները չեն կրնար հրապարակային պաշտամունք կատարել, չեն կրնար նոյն իսկ տաճարներու և փողոցներու մէջ երեւիլ առանց անարգանքի ենթարկուելու»։ զանազան քաղաքներու մէջ Ռուսիոյ, տեղի ունեցան նմանօրինակ անկարգութիւններ, քարկոծումներ՝ կենդանի եկեղեցիի անդամներուն վրայ. Եարոսլաւի մէջ, Էփտոկիմօֆ անուն համայնավար քահանայ մը սպաննուեցաւ որուն գրպանին մէջ գտան նամակ մը սա բառերով «զգուշութիւն՝ բոլոր անոնց որոնք կը փափաքին եկեղեցիին վերածել համայնավար ակումբի»։

Այս քաղաքականութեամբ գործող Յեղափոխական ամբողջավար Պետութեան մը սահմաններուն մէջ ապրող եկեղեցիին կը մնար միայն լռել, զղջալ, ապաշխարել և աղօթել։ Ռուս Օրթոտոքս եկեղեցին այսօր քան խոր ու ցնցիչ կրօնական պառակտումներէ յետոյ աւելի ևս ուժաւորուող քաղաքականութեան մարտիրոսութիւնը եկեղեցւոյ նոր ձայնը եղան. թէեւ Ռուսիոյ մէջ վերջ գտաւ կրօնական կեանքը, գէթ իր արտաքին երևոյթներէն դատելով, ոգեկան կեանքը սակայն այդ գծաբխտ վախճանը չունե-

## ԳԵՂԵՍՏԻՆԱԳՐԱԿԱՆ

### ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

(Շար. Սիւն 1942, էջ 154էն)

#### 3. — Ս Ի Ո Ն

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ. — Ս. Գրքին մէջ, որոշ կերպով, Սիւն լեռը՝ Քաղաքին Սրեկեան բլուրին համար կ'ըսուի, որուն վրայ Տաճարը կը գտնուէր, սակայն երբեմն այս անունը գործածուած է, առանց ճշգիւր անոր տեղն ու կողմը։ Սիւն լեռ, բնաւ Արեւմտեան բլուրին համար չէ՝ կիրարկուած։ Ասկէց զատ, Սիւնը գործածուած է նաեւ ամբողջ Ս. Քաղաքին համար ալ։

ցաւ, ու Օրթոտոքսութիւնը իր ձայնը լսելի ըրաւ արտասահմանէն, նոր կենսունակութեամբ առլցուն, պաշտպան՝ Օրթոտոքս դաւանանքին և ուղղութեան։

Արտասահման գտնուող Ռուս մեծագոյն գէմքերու զրուածքներու մէջ — Bulgakov, Berdiaeff, Arsenieff — ահնայախնի կ'երևի սա մտածումը թէ, ընդհանուր պատերազմը և Յեղափոխութիւնը, մեծագոյն փորձութիւնն ու դասը եղան Ռուս եկեղեցիին, մնալու իր կոչման համապատասխան հոգեւոր առաքելութեան մէջ միայն։ Եկեղեցւոյ և Պետութեան բաժանման սկզբունքի ջատագոյնութիւնէն է Bulgakov, որ կ'ըսէ. «Օրթոտոքսութիւնը ազատ է այժմ և պէտք չէ ծառայէ ունէ քաղաքական ուժի մի, ոչ կայսերապաշտ պապականութեան և ոչ պապական — կայսերականութեան»։

Եւրոպա, Ամերիկա այս մտաւորականներու շունչով նոր Օրթոտոքսութիւն մը կազմուեցաւ որ անխուսափելիօրէն տէրը պիտի ըլլայ վաղուան անակնկալներէն յետոյ գոյութիւն ունենալիք Ռուս Օրթոտոքս եկեղեցիին։

Ռուսիոյ մէջ Օրթոտոքս եկեղեցիի նոյն ճակատագրին ենթարկուեցան նաեւ կաթոլիկ ու Բողոքական եկեղեցիները. երկու եկեղեցիներն ալ նախապէս ճանչցան Սովիէզ իշխանութիւնը. բայց կառավարութենէ մեղադրուեցան իւր իշխանութեան դէմ դաւողներ։

(Շարունակել)

ԱՐԹՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ



ՄԱԿԱՐԵԱՆՅ ՇՐՋԱՆԸ. — Մակարայեցուց Ա. Գիրքին մէջ, Սիոն լեռը ութը անգամ յիշուած է. այս հատուածներէն միոյն մէջ սակայն անոր տեղագրական դիրքը չէ ճշդուած, իսկ մնացեալ 7 հատուածներուն մէջ, Տաճարին բլուրին ակնարկութեամբ յիշուած է:

Պէտք է զիտել տանք որ, վերոյիշեալ բնագիրներուն մէջ յստակօրէն կը հասկցուի որ, Սիոն լեռը, ամբողջ երուսաղէմ քաղաքին համար չկրնար ըսուած ըլլալ: Նախ, Սիոն լեռ ճշդիւ արտայայտուած բացատրութեամբ և ապա Ս. Գաղաթին ամբողջութիւն Մակարեանց տիրապետութեան ներքե չգտնուելուն պատճառաւ: Միւս կողմէն, Սիւրիացիները Միջնաբերդին և կամ Ակրային մէջ կեդրոնացած ըլլալով, անկէ Տաճարին վրայ կրնային յարձակիլ, առանց երբեք անոր ամբողջութեանը տիրանալու:

Վերջապէս, կը տեսնենք թէ, Յուդա Մակարեան չկրնալով զանոնք իրենց ամուր եւ պաշտպանուած տեղերէն հեռացնել, անոնց յարձակմանց դէմ պաշտպանուելու համար, Տաճարին շրջապատը կ'ամրացնէ:

Յետոյ Տաճարը և Ակրան Սիւրիացիներու կողմէ կը գրաւուին: Եւ երբ, Կափարսաղամայի մէջ, Նիկանովրի զինուորները Յուդայի կողմէն պարտուեցան, Նիկանովր Դաւթի քաղաքին մէջ ապաստանեցաւ (Ա. Մկր. Է. 33): Նիկանովր, Դաւթի քաղաքէն է որ գէպի Սիոն լեռը կ'երթայ, հոն զոհ մատուցանելու համար: Տաճարէն զատ, արդեօք ուրիշ տեղեր ևս զոհ կը մատուցանէին...: Յովնաթան Սիոն լեռը ամրացուց (Ա. Մկր. Ժ. 11): Այդ ժամանակ արդէն, Տաճարը, հրէից համար պաշտելի և սիրելի էր: Երուսաղէմի նուաճումը Սիմոնի օրով վերջնական եղաւ: Սիմոն Ակրան պաշարեց և Տաճարը ամրացուց որ Միջնաբերդին մօտն էր (Ա. Մկր. ԺԳ. 53): Առ ի գնահատութիւն իր այս ծառայութեանց, ի պատիւ անոր, Սիոն լեռան վրայ պղնձեայ տախտակներ քանդակեցին. «և հաստատեցին նմա ազատութիւնս, և զրեցին զայս ի տախտակս պղինձիս. և կանգնեցին նմա արձան ի լեւրին Սիոն» (Ա. Մկր. ԺԴ. 27):

Ուրեմն հետեւեալ կէտերու մասին ունէ կասկած գոյութիւն չունի: Մակարեանց շրջանին երուսաղէմ քաղաքը, Դաւթի քաղաքը և Սիոն լեռը ակնատեսներու

կողմէ իրարմէ կը զանազանուէին: Ամբողջ քաղաքը պատերազմի թատր դարձած էր, Դաւթի քաղաքը, Սիմոն Մակարեանի շրջանին, Սիւրիացիներէն գրաւուած էր, Սիոն լեռ՝ Տաւարին բլուրին եւ Տեղույն համար միայն կը կիրարկուէր: Մենք իբրեւ տեղագրական տեղեկութիւն կրնանք ընդունիլ որ, Ակրան Տաճարին շատ մօտը կը գտնուէր: Թշնամիները, Մակարեանները նեղելու համար շատ աշխատեցան, սակայն անոնք Տաճարը լաւ կերպով կրցան ամրացնել, այնպէս որ յետագային ստիպուեցան առանձինն պաշարուի մը ի գործ դնել զայն գրաւելու համար:

ՍԱՂՄՈՍՆԵՐ ԵՒ ՄԱՐԳԱՐԷՆԵՐ. — Սաղմոսներուն և մարգարէական գրութիւններուն մէջ, Սիոնը երբեմն Տաճարին բլուրը, երբեմն ամբողջ երուսաղէմ քաղաքը, երբեմն հրեայ ժողովուրդը կը նշանակէ: Սիոն լեռը Տաճարին բլուրը ցոյց կուտայ: Մեր այս առաջարկութիւնը հաստատուած պիտի ըլլայ, եթէ երբեք Ս. Գիրքը այս խնդրոյն մասին իր բնագիրներուն համաձայնութեամբ զայն ճշդիւ հաստատէ, իսկ հակառակ պարագային, խնդիրը անորոշութեան մէջ մնալու հարկադրանքը պիտի տայ մեզի: Մինչդեռ, ո՛չ մէկ բնագիր, Սիոն լեռան համար Տաճարի բլուրէն զատ, մեզի ունէ ուրիշ բլուր մը ցոյց չի տար: անով հաստատուն կուտան մը կ'ընծայէ մեզի, Սուրբ Տեղեաց վաւերականութեան մասին. այս իրականութիւնը այնքան ճշմարիտ է որ համաձայնութիւնը կատարեալ կ'ըլլայ: Սիոնը յորջորջուած է Սուրբ Լեռ (Mons Sanctus), Տեղի Սուրբ Տեառն (Sive Mons Domini):

Ուստի, նախ կ'սկսինք Սաղմոսներէն, զիտել տալով որ, իբրեւ պատմական ապացոյց, հինգ Սաղմոսներէն իւրաքանչիւրին մէջ, ուր՝ Սիոն լեռը կը յիշուի, անոնք Դաւթի չեն վերագրուիր(\*):

Ասոնցմէ երկուքը, ըստ իրենց տիտղոսին, Ասափի կը վերագրուին, ուրիշ մը՝ Կորիսայ որդուց, մնացեալ երկուքը «Օրհնութիւնք Աստիճանաց» վերտառութիւնը կը կրեն: «Օրհնութիւնք Աստիճանաց»

(\*) Այսուամենայնիւ տե՛ս նաեւ Բ. Սաղմոս 6 համարը «Ես կացի թաղաւոր ի նմանէ, ի վերայ Սիոնի լեռին սրբոյ նորա՝ պատմել ինձ ըզհրամանս Տեառն»: Բայց այս հատուածը զուտ Մեսիական է:



(Սղմս. ՃԻԴ. 1 և ԺԼԴ. 3) Սաղմոսներուն մէջ, Սիւն լեռան դիրքը չէ ճշգրտած: Ընդհակառակը, Աստի (Սղմս. ՀԳ. եբր. ՀԴ.) Տաճարին կործանումը կ'ողբայ. «Լեռան Սիւն այս ուր բնակեցեր զու ի սմա»: Աստուծոյ բարեխնդրութեամբ մասին կը պատմէ (Սղմս. ՀԷ. եփր. ՀԸ.), «Այլ ընտրեաց նա զադգն Յուդայ, զԼեռան Սիւն զոր և սիրեաց: Շինեաց որպէս միեղջերոյ զսրբութիւն նորա, յերկրի հաստատեաց զնա յաւիտեան» (69):

ԽԷ. (եբր. ԽԸ.) Սաղմոսը աւելի յատկանշական է. «Մեծ է Տէր և օրհնեալ է յոյժ, ի քաղաք Աստուծոյ մերոյ, ի լեռան սուրբ նորա: Հաստարմատ ցնծացէ ցընծութեամբ ամենայն երկիր, լերինք Սիւնի, կողմանք հիւսիսոյ քաղաք թագաւորի մեծի» (2, 4):

Եթէ երբեք նկատի առնենք Ռելանի (Reland) (\*) հետ, Սիւն լեռան ունեցած դիրքը թէ, ո՛ւր և ո՛ր կողմը կը գտնուէր, Սաղմոսերգուն կողմէ եղած ակնարկութիւնը որքան բլրան Հիւսիսի, այնքան ալ քաղաքին հիւսիսային մասին է: Բայց ո՛ր բլրան մասին կը խօսի: Արդարեւ, Սիւն լեռն հիմէ երբեք, իր ամբողջ բարձրութեամբը Հիւսիսէն դիտուելի, այնքան գեղեցիկ չէր երևիր, վասնզի ամէն կողմերէ շրջապատուած կը գտնուէր: Ինչ որ Սիւն լեռան գեղեցիկ տեսք մը կուտայ և անոր վեհութիւն մը կ'ընծայէ, հարաւակողմի կատարն էր արդարեւ, որ Սաղմոսերգուն կողմէ չէր կրնար դիտուիլ:

Երուսաղէմը «Քաղաք Աստուծոյ մերոյ» կը կոչուէր: Ըստ Եսայի մարգարէին՝ նախ ապագայ վերանորոգում մը տեղի պիտի ունենար: Ը. 18ին մէջ «և եղիցին նշանք և արուեստք ի վերայ տանն Իսրայելի, ի Սաբաւովթ Տեառնէ որ բնակեալ է ի լեռին Սիւնի»: Հոս, այս հատուածի մասին, ուշադրութիւն պէտք է ընել: «Որ բնակեալ է» կ'ըսուի, և ոչ թէ «կը բնակի»: Եհովան այդ ժամանակ Աքադիոյ պալատին մէջ, թէ ոչ Սողոմոնի Տաճարին մէջ կը բնակէր: Ասկէջ զատ, Սիւն լեռն Երուսաղէմէն կը զանազանուէր:

Յովէլ մարգարէն (Բ. 32), իր մար-

գարէական գուշակութեանց մէջ, փրկութեան յոյսը կը ծանուցանէր: Կ'երևի թէ Սիւն լեռան սրբութիւնը, ուր Աստուած կը բնակէր, Երուսաղէմի վրայ ևս պիտի տարածուէր, ուրկէ, յետ այնու օտարականները պիտի չկրնային անցնիլ (Գ. 17): Սիւն լեռն սուրբ լեռ մըն էր, վասնզի՝ Աստուած հոն կը բնակէր: Հոս խնդիրը Տաճարին, և ո՛չ թէ Երուսաղէմ քաղաքի մասին է: Տաճարէն էր որ թմբուկները կը հնչեցնէին ի լուր ժողովրդեան, տօնական և ուրիշ հանդիսական օրերուն (Բ. 1):

Այս բնագիրներէն անժխտելիօրէն երևան կուգայ թէ, մարգարէից չըջանին, «Սիւն լեռ» բացատրութիւնը ճշգրտեալ նշանակութիւն մը ունէր և բնաւ Երուսաղէմ քաղաքին հետ չէր շփոթուեր:

Բայց այս փաստերուն արժէքը շատ անստույգ է, ամէն անգամ որ զուգահեռականութիւն մը գոյութիւն ունենայ: Ամէն անոնք որ Սիւնը կ'ուզեն Երուսաղէմէն զանազանել, հակադիր զուգահեռականութեամբ մը կ'առարկեն: Մենք անոնց բուրիւր կը պատասխանենք. —

Համադրութեան զուգահեռականութիւնը, պարագաներու ներքեւ կրնայ նոյն բանին կամ նոյն գաղափարին երկու բացատրութեանց վերածուիլ: Ուստի, այս բնագիրները մէկդի դնենք: Նկատեցինք թէ, մարգարէից չըջանին, Սիւնը շատ անգամ ներ հոմանիշ է Երուսաղէմին:

Այս իրողութիւնը բնականօրէն բացատրուեցաւ: Սիւն լեռն որ Եհովայի մասնաւոր բնակավայրն էր, նոյն այն բլուրն էր որ, Երուսաղէմի մէկ մասին, այսինքն՝ ստորին մասին մէջ կը գտնուէր:

Սաղմոսերգուները եւ մարգարէները Սիւն անունը անդադար իրենց չըթուէնքներուն վրայ ունէին, և երբեք ասկէ աւելի գեղեցիկ ու հայրենասիրական արտայայտութիւն մը բացատրել չէին կրնար խորհիլ:

Ուստի Սիւն բառը բացատրութեան կը կարօտի: Բաց աստի, այս անունը շատ կը գործածուէր: Ուրեմն կրնանք եզրակացնել թէ, այս բառին գործածութիւնը և նշանակութիւնը փոխուած էր: Յերուսաղէմի Միջնաբերդը եղող Սիւն լեռն իր նախնական իմաստը չէր պահած: Ուստի այս երևոյթը, շատ բնական կերպով կարելի է բացատրել, նախապէս Սիւնը օրոշ և մասնաւոր տեղի

(\*) Տե՛ս, Palestina ex Monumentis Veteribus illustrata, էջ՝ 847.



մը համար գործածուեցաւ, ապա՝ ամբողջ բլուրին համար սկսաւ գործածուիլ, ուր ըստ մարդարէից և Մակարայեցոց զիրքին եհովայի Տաճարը կառուցուած էր:

Այս բնագիրներուն ուսումնասիրութիւնը, մեզի հետեւեալ եզրակացութեանց կ'առաջնորդէ. —

1. — Ի սկզբանէ Սիւն անունը, Յեւրոսացոց Միջնաբերդին համար գործածուեցաւ, կամ այն բլուրին տեղ ուր կը գտնուէր ան, որ յետոյ Դաւթի քաղաքը կ'աւելար:

2. — Սիւն անունը, «Սիւն լեռ» նըշանակութեամբ, Տապանակ Ուխտիին փոխադրութենէն վերջ, Տաճարին բլրան համար գործածուեցաւ:

3. — Սիւն անունը, երբեմն երուսաղէմի մէջ մասնաւոր բլուր մը, երբեմն Սիւն լեռը, երբեմն ամբողջ քաղաքը, երբեմն նոյնիսկ հրեայ ժողովուրդը կը նշանակէր: Ահաւասիկ իրողութիւններ, այնպէս ինչպէս որ մեզի կը ներկայանան, մեր կողմէ կատարուած ուսումնասիրութեանց լոյսերովը:

Բայց ի՞նչ փաստեր ունինք այն հարցման, զիտնալու համար թէ՛ նախկին Սիւն բլուրը Արեւելք թէ՛ Արեւմուտք կը գտնուէր: Սիւն անունը արդեօք Արեւմտեան բլուրէն մինչև Արեւելեան բլուրին համար միայն գործածուեցաւ, թէ ոչ ի վերջոյ միայն Արեւմտեան բլուրին համար վերապահուեցաւ: Այս երկու փոփոխութիւնները բընադանցօրէն և ֆիզիքականօրէն կարելի են, բայց քիչ հաւանականութիւն ունին: Սիւն անունը, նախ՝ Արեւելեան բլուրին մէկ մասին, ապա՝ ամբողջ բլուրին համար, որուն վրայ Տաճարը կը գտնուէր, ապա՝ ամբողջ քաղաքին համար, հուսկ ուրեմն հակադիր (Արեւմտեան) բլուրին համար գործածուեցաւ:

Մեր այս եզրակացութիւնը ստոյգ եւ հիմնական կ'ըլլայ, իթէ երբեք ապացուցանենք որ, Դաւթի քաղաքը Արեւելեան բլուրին վրայ հաստատուած ըլլայ, քանի որ, ասկէ առաջ տեսանք որ, Դաւթի քաղաքը Յեւրոսացիներուն հին Միջնաբերդին վրայ հիմնարկուեցաւ:

(Շար.)

ՊԱՐԴԵՒՆՆԻ ՎԱՐԴԱՊԵՏ

## Ե. Ն. Մ. ՄԻՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԻՐ ՏԵՂԵԿԱԲԵՐ Ա., Բ., Գ-Դ ՊՐԱԿՆԵՐԸ

Երուսաղէմի Հայ Մշակութային Միութիւնը իր գոյութեան երրորդ տարեշրջանին մէջ է: Ուշացուցինք մեր խօսքը այս Միութեան մասին, սպասելով զինք տեսնել իր նպատակներու իրագործման ճամբուն վրայ, և ուրախ ենք յայտարարելու թէ, Երուսաղէմի Հայ Մշակութային Միութիւնը շնորհիւ իր երկու իմաստուն և հեղինակաւոր հիմնադիրներուն՝ Պր. Յ. Օշականի և Պր. Շահան Ռ. Պէրպէրեանի, արդէն իսկ իր գերին մէջ է:

Աւելի քան քառասուն երկրորդական ուսում տեսած երիտասարդներ և երիտասարդուհիներ կը հետեւին Միութեան դասախօսութիւններուն, որոնք նպատակ ունին մեծաւ մասամբ օտար զաստիարակութեամբ կազմուած սերունդը ընտելացնել մեր մշակոյթին, խանդավառել զանոնք իրենց ցեղին միակ և անկողոպտելի հարստութեամբ, առաջնորդելով զիրենք այդ ժառանգութեան վրայ բան մը աւելցնելու ճամբուն մէջ:

Միութիւնը իր նպատակին և իրագործումներուն համար չնորհաւորելի է, և զրուատական խօսքերու չի կարօտիր. իսկ զայն կարելի ընող ծանօթ գոյզ մտաւորականներու արժանիքը կը բաւէ որ մենք մեր լաւագոյն սպասումներուն մէջ խառնուած չզգանք ինքզինքնիս:

Զեռնարկը աւելի քան սրտապնդիչ է, և միայն ուրախութիւն կրնայ պատճառել բոլոր անոնց, որոնք ազգային մշակոյթի և մտքի արժէքներուն նկատմամբ սէր և գուրգուրանք ունին, Սիւն լեռի մեր տփօյն ու միապաղաղ կեանքէն ներս:

Հայ գրականութեան և օտար ու հայ արուեստի շուրջ հետաքրքրութիւն և սէր ստեղծելու այս ճիգը և անոնցմով խանդավառուելու ու անոր սպասը ընելու փոյթը, բացառիկ երեւոյթ կը կազմէ գաղութահայ մեր կեանքին, եւ սպասելի էր որ ան երեւան գար Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց պատմական և ազգային տան քովը, մտաւոր ու հոգեկան դրացնութեան



մէջ այն հաստատութեան, որ ամէն օր նոր նուաճումներ կը փորձէ կրօնական և ազգային մշակոյթի զեռնին վրայ: Որքան սրտապնդիչ պիտի ըլլար անոնց սերտ գործակցութիւնը, ոչ միայն երուսաղէմի, այլ նաև Սփիւռքի միւս կեդրոններուն մէջ, որպէս զի չուկայիկ և չոր դատումներէ միայն տարուած մտայնութիւններ լայն գետին չգրաւէին: Ոչ միայն հայիւ կեցցէ մարդ»։ Հոգիի ու մտքի կեանքը շատ աւելի կ'արժեն զարնուած ու տառապեալ ազգի մը հոգիին համար, քան նվթականին հանապազօրդ մտախոհանքը:

Գալով Միութեանը հրատարակած պըրակներուն, անոնք համառօտագրութիւններ են եռամսեայ դասախօսութեանց, աշխատարաններու վարժութեանց, և Միութեան գործունէութեան կարգ մը երեսներուն, ու կը միտին նախ օգտակար ըլլալ Միութեան անդամներուն, անոնց հայթայթելով դասախօսութեանց մնայուն նօթեր, և չահագորդուողներուն բաժին հանել մտքի այդ բարիքէն:

Գոհունակութիւն և շնորհակալութիւն արժող այս վերջի պարագան, իր չորս պրակներով, արժանի է անդամներու անմիջական պարունակէն դուրս, աւելի լայն հետաքրքրութեան և զնահատանքի: Մեր լեզուն եւ գրականութիւնը, իրենց մեծ մշակին, Պր. Յ. Օշականի արժեգատումին ենթարկուած, մեր աչքերուն և հոգիին կը բանան էջեր՝ գծի, գոյնի և ոգիի իրենց հանդէսով, որոնք թարմ են ու զեղեցիկ և մեր հիացումը կը պարտադրեն հայ գրականութեան յղացքը այնքան ձեռնհասօրէն կերպագրող այս տիրական գէմքին: Օշականին կեցուածքը մեր գրական արդիւնքներուն հանդէպ այս պրակներէն ներս մասնաւորաբար, իր գիտումներուն և դատումներուն մէջ թէ և խիստ՝ շատերուն դժգոհանք պատճառելու չափ, կը մնան վաւերական վարպետի մը մատնանշումներ, որոնց վերծանումը նորութեան և հեղինակի մեծութեան զգացումներով կը տոգորէ ընթերցողը, և բարիք է անոնց ընտելանալ:

Իսկ Պր. Շահան Պէրպէրեանի Հայ և օտար արուեստներու շուրջ եղած դասախօսութիւնները նոյն իսկ իրենց այս համառօտ ձևին տակ թանկագին են, և կ'որակեն հեղինակին անզուգական արժէքը: Պր.

Շահան Պէրպէրեան մին է մեր այն մտաւորականներէն, կերարկելով բառը իր ուղղափառ իմաստով, որ իր նիւթին մէջ բնակելու արուեստը ունի. կարելի է իրեն համար ևս ըսել, թէ ճշմարտութիւնն ու անձնականութիւնը զիրար կը լրացնեն իր արտայայտութիւններուն մէջ, և թէ խօսքը իր շրթներէն չէ որ կուգայ միայն, այլ իր ամբողջ էութեան մէջէն կը ճամբորդէ, ընդունելով անոր անձնաւորութենէն գոյն, զիմ ու ձև: Էջեր որոնք ընդհանուր և հայ արուեստի յայտադրումը կ'ընեն Մշակութայինի տեղեկագիր պրակներու մէջ, այս խոր տպաւորութեամբ կը համակեն ուշադիր ընթերցողը:

Ազգային ու հոգեկան պարտք է, քաջալերութեան և գուրգուրանքի առարկայ ընել մշակութային նման ձեռնարկները: Անոնք որ ազգային ուրոյնութեան գիտակցութիւնը ունին՝ չեն կրնար տարբեր մտածել, օտար միջավայրի և մշակոյթներու մաշումին տակ եղող գաղթաշխարհի հայութեանը մասին: Ով որ գուրկ է իր ազգային մշակոյթի գիտակցութենէն, կրողն է օտար մշակոյթին: Յաւերժութեան և համամարդկային վերացական խոկումներ, և անցաւորութեան ջլատիչ միտքեր պէտք չէ որ զոռածեն արդի գիտակից հայը: Մարդկութիւնը վերացական գաղափար է, կան միայն ազգեր և ցեղեր իրենց ուրոյն կերպարանքով, այսինքն մշակոյթով: Հոգեկան այս ժառանգութեան իւրացումով միայն կը պահուի անհատին կապը իր ազգութեան և անով մարդկութեան հետ: Ով որ անդամ չէ իր ազգին, չի կրնար անգամ ըլլալ մարդկային մեծ ընտանիքին:

Մարդկային մշակոյթը իրրեւ կրօն, գիտութիւն, արուեստ, բարք և տնտեսութիւն ազգային կերպարանք ունի. որդեգրել օտար մշակոյթ՝ անգիտանալ, ուրանալ է անոր սեփական կերպարանքը: Ազգային այդ գիտակցութեան ու կերպարանքի պայծառացման է որ կը միտի Մշակութայինը:

Ինչպէս ըսինք աւելի քան խանդավառիչ է ձեռնարկը, և արժէքաւոր անոր արդիւնքը եղող պրակները: Վստահ ենք որ մօտ ապագային Մշակութային այդ պրակները պիտի լայնեն իրենց ծաւալը անդամներուն ալ մասնակցութեամբ. ասիկա՝ ինչպէս մեր, իրենց ալ փափաքը թող ըլլայ:

Ե. Վ. Տ.



## Կ Ո Չ

## ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը իր սրտագին զոհունակութիւնն է յայտնում Հայաստանի հարազատ զաւակներին, որոնք հանդէպ Հայրենիքի եւ Հայ Ժողովրդի սէր եւ անձնուիրութիւն են ցուցադրում եւ հերոսաբար կռոււմ քուրդ ճակատներում, ազատագրական պատերազմ մղելով մեր երկիրը ներխուժած գերմանական զօրաբանակների դէմ:

Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը իր խորին շնորհակալութիւնն է յայտնում նաեւ Արտասահմանի Հայութեան, նամանաւանդ Սմերիկահայութեան, որ Մայր երկրի իր հարազատ եղբայրների ապրումներով է տառապում եւ՝ նորա վարած ազատագրական պատերազմի յաջողութեան ու թշնամու շուտափոյթ ջախջախման համար՝ չի խնայում իր նիւթական եւ բարոյական աջակցութիւնը հերոս կարմիր բանակին:

Հայ Ժողովուրդը իր շնորհակալութիւնն է յայտնում Ռուս մեծ Ժողովրդին, որի աջակցութեամբ եւ իր քրտնաջան աշխատանքի շնորհիւ՝ աղքատութեան ճիրաններից եւ աւերակների ծոցից ելնելով՝ վերակենդանացաւ եւ դարձաւ զօրաւոր ու հարուստ եւ ստեղծեց նիւթական եւ կուլտուրական շատ արժէքներ:

Հայ Ժողովուրդը երախտապարտ է զգում իրեն հանդէպ Խորհրդային Իշխանութեան, որի շնորհիւ միայն ծնուք բերեց նա իր երազած անկախ պետականութիւնը: Խորհրդային Իշխանութեան աջակցութեամբ եւ նորա մտաւոր, բարոյական ու տնտեսական ոյժերը տրամադրելու հետեւանքով՝ Հայաստանը աւերակ վիճակից վերաշինուեցաւ, տնտեսապէս զօրացաւ եւ ստեղծեց ու զարգացնում է իր սեփական մշակոյթը:

Ռուս մեծ Ժողովրդի մեծահոգի եւ մարդասէր վերաբերմունքը դէպի Հայ Ժողովուրդը ոչ միայն ծնել է Հայ Ժողովրդի մէջ երախտագիտութեան, այլ եւ մտերմութեան եւ սիրոյ զգացմունք, որի հետեւանքով հաստատուել է այդ երկու Ժողովուրդների մէջ փոխադարձ անխզելի կապ:

Այս է պատճառը, որ՝ երբ գերմանական աշխարհաւեր զօրաբանակները ներխուժեցին Խորհրդային Միութեան սահմանները՝ Հայ Ժողովուրդն էլ, միւս եղբայրակից Ժողովուրդների հետ՝ ծառացաւ Խորհրդային երկիրը ներխուժող թշնամու դէմ եւ հայրենական սրբազան պատերազմ մղեց ընդհանուր Հայրենիքի, նորա քաղաքական ազատութեան եւ տնտեսական ու կուլտուրական նուաճումների պաշտպանութեան համար:

Մեր նախնիքը դարերի ընթացքում պայքարել են օտար բռնակալների դէմ, որոնք ձգտել են ֆիզիքապէս եւ հոգեպէս ստրկացնել Հայ Ժողովուրդը: Հայ Ժողովրդի ազատասիրական եւ հերոսական ոգու ցայտուն արտայայտութիւններից մէկն է Վարդանանց Պատերազմը, որ մղուած է յանուն Հայրենիքի եւ քրիստոնէական կրօնի ազատութեան:

Պատերազմի հերոսը Վարդանն է իր քաջարի ընկերներով, որ քրիստոնէական ոգեով դաստիարակուած, Հայրենիքի սիրով վառուած, Հայ Ժողովրդի ազատութեան համար զոհուելու պատրաստ, կանգնած է մեր առաջ:

Մեր առաջ կանգնած է նաեւ պատերազմի հոգեւոր հերոսը, Ղեւոնդ Երէցը իր ընկերներով, որոնք օրհնել են Հայ Ժողովրդի պայքարող հերոսական ոգին, ներշնչել են ազգային անկախութեան գաղափարը եւ՝ Խաչն ու Աւետարանը ձեռներին՝ քաջալերել հայ զօրքը ու դէպի յաղթութիւն առաջնորդել նրան:

Վարդանն ու Ղեւոնդ Երէցը իրենց ընկերներով մարտիրոսացան, բայց փրկեցին Հայրենիքն ու հայրենի կրօնը, եւ երախտագէտ հայ Ժողովուրդը անմահացրեց նոցա յիշատակը՝ դասելով նոցա սրբոց կարգը եւ նոցա յիշատակին տաքեկան տօն սահմանելով:

Հայ Ժողովրդի այս ազատասէր եւ պայքարող ոգու շնորհիւ է, որ իններորդ դարում Բագրատունեաց ջանքերով ազատուեցաւ Հայաստանը արաբական լուծից եւ ինքնուրոյն դարձաւ: Նոյն այդ պայքարող ոգու շնորհիւ է, որ 11րդ դարում անկախութիւնը կորցրած Հայութիւնը Ռուբինեանց շնորհիւ Կիլիկիայում քաղաքական անկախութիւն ձեռք բերեց:



Ոչ միայն Հայոց պատմական կեանքը, այլ և նորագոյն կեանքը հարուստ է նման երևոյթներով, որոնց սիրուն և հմայիչ պատկերները տալիս են Ռաֆֆին, Արովեան և ուրիշներ:

Հայ ժողովրդի այդ պայքարող ոգին ապրում է նաև այսօր, որի շնորհիւ նորա հաւատարիմ զաւակները, իրրեւ մի մարդ միացած, միւս եղբայրակից ժողովուրդների հետ ծառացել են խորհրդային երկիրը ներխուժած թշնամու դէմ և հայրենական սրբազան պատերազմ մղում ընդհանուր հայրենիքի պաշտպանութեան համար:

Այսօր՝ երբ թշնամին կանգնած է Կովկասի դրանը և սպառնում է մեր Հայրենիքին, նորա ազգային անկախութեան և ազգային մշակոյթին՝ Հայ ժողովուրդը, հաւատարիմ իր պայքարող ոգու, ևւս առաւել ոգեշնչուած է իր Հայրենիքն ու իր սրբութիւնները պաշտպանելու: Սուրբ է նորա կամքն ու պայքարը և էջմիածինը օրհնող է նորա կամքն ու զէնքը:

Ամօթ և նախատինք նոցա, որոնք կը դաւաճանեն մեր Հայրենիքի շահերին, որոնք Վասակի և Յուդայի նման, դաւաճանելով ժողովրդին և իրենց Հայրենիքին, կը ծառայեն թշնամուն: Հայ ժողովուրդը այդպիսիներին դատապարտութեան սիւնին կը զամէ, ինչպէս պատմութիւնը վարուել է Վասակի և մատնիչ Յուդայի հետ:

Ազգերի իրաւունքն է ազատ ապրել, հայրենիք ունենալ և այնտեղ իրենց վիճակն ազատօրէն ինքնորոշել: Ընդհանուր մարդկային այս տարրական իրաւունքի պաշտպանութեան համար է, որ պայքարում են Միութենական երկրի բոլոր ժողովուրդները և՛ իրենց այդ արդար իրաւունքի պաշտպանութեան հետեւանքով՝ աներեւակայի՛ն զազանաբարոյ հալածանքի ենթարկում — ծերեր, կանայք և մանուկներ սրախողխող լինում. գերի ինկած հերոս մարտիկներ, անասելի տանջանքների ենթարկուելուց յետոյ՝ սպանւում. գինւորական հիւանդանոցներ անողոր ռմբակոծւում, շէն քաղաքներ և գիւղեր զազանաբար աւերւում, որի հետեւանքով բխրաւոր ընտանիքներ՝ անտուն — անտէր մնացած՝ տառապալից գաղթի մատնւում:

Ս. էջմիածին Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը ուժգնապէս բողոքում է այս անիրաւութիւնների դէմ, որ հակառակ է կրօնի և քաղաքակրթութեան պահանջներին և վիրաւորական՝ մարդկային խղճին:

Մենք վստահ ենք թէ՛ բոլոր կրօններն ու քաղաքակիրթ պետութիւնները բողոքի աւելի ուժգին ծայն կը բարձրացնեն այս զազանաբարոյ երևոյթներին վախճան տալու համար: Սակայն ոյժը ոյժով է զսպւում, և ոյժը միութեան մէջ է. ուստի պէտք է միանան բոլոր նոքա, որոնք անարդարութեան զոհ են զնացել, բոլոր նոքա՝ որոնք անարդարութիւն ճաշակելու դրանն են կանգնած, պիտի պայքարեն բոլոր զօրաւորները, որոնք արդարութեան և ճշմարտութեան դաւանողներ են, որոնք մարդկային ազատութեան կողմնակից և կուլտուրական արժէքների պաշտպան են, որոնք կամենում են ապագայում ազատ ապրել ու զարգանալ:

Հայ ժողովուրդը այսօր աւելի քան երբեւէ հաւատում է մեր և դաշնակիցների յաղթանակին: Մեր վախճանական յաղթութեան զրաւականն է խորհրդային Միութեան ժողովուրդների բարոյական միութիւնը և նիւթական լայն աջակցութիւնը բանակին. մեր քաջարի զօրքի հերոսութիւնը, նորա ցմահ պայքարելու և թշնամուն դիմադրելու աննկուն կամքը. բոլոր միւս ազգերի համակրութիւնը: Անգղիայի և Ամերիկայի հզօր և հարուստ պետութիւնների դաշնակցութիւնն ու աջակցութիւնը և մեր պայքարի արդարութիւնը:

Թո՛ղ Տէրը տեսական անէ Հայ ժողովրդի պայքարող ոգին և նորա միութիւնը պահպանէ:

Թո՛ղ Տէրը զօրացնէ մեզ մեր Հայրենիքը պաշտպանելու և թշնամուն ջախջախելու:

Թո՛ղ Տէրը արդարութեան և բոլոր ազգերի իրաւունքի պաշտպան հանդիսանայ պարգեւելով նոցա արդար յաղթանակ, որպէսզի այլեւո՛ր աշխարհը խաղաղի և յետպատերազմեան մարդկային կեանքը արդար սկզբունքներով կառուցուի:

Տէրը մեզ հետ է և մեր յաղթանակը անխուսափելի. «Եթէ՛ Տէր ընդ իս է, ո՞վ կարէ՛ կալ մեզ հակառակ»:

ՆԱԽԱԳԱՀ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԻ՝

ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԷՕՐԷՔԶԵԱՆ

ԱԶԳԵՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ ԱՄ. ՀՅՅ. ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

(ԿՆԻՔ)



## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Ս. ԷԶՄԻԱՆՆԻ ԱՄԵՆ. ՍՐԱՍԶԱՆ ՏԵՂԱ-  
ԿԱԼԻ ՀԵՌԱԳԻՐԸ՝ ԱՄ. ՀԱՅՈՑ ԿԱԹՈ-  
ԴՐԵԱՍԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՍԱԼ

Ամենայն Հայոց Հայրապետական Ամեն.  
Տեղակալը Սեպտեմբեր 1 բուսականով հետեւ-  
եալ հեռագիրը ուղղած է Ս. Արսույս Ամեն.  
Ս. Պատրիարք Հօր:

«Նկատի ունենալով ներկայիս տիրող  
պատերազմական վիճակը, էջմիածնի Գերա-  
զոյն Հոգեւոր Խորհուրդը Հայոց Կաթողիկո-  
սին ընտրութիւնը յետաձգեց 1942 թուակա-  
նին: Հաճեցէք զայս յայտարարել ՍԻՈՆ-ի  
միջոցաւ եւ հաղորդել Պուլկարիոյ, Յունաս-  
տանի, Ռումանիոյ եւ Եւրոպայի Թնմբուն»:

(Ստորագրութիւն)

ՏԵՂԱԿԱԼ ԳԷՈՐԳ

ԾԱՆՈԹ. ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ. — Նկատելով  
որ արդիւն 1942 տարւոյն մէջ կը զտնոյնի, հա-  
շանակաւ եւ որ 1943 ըսել կ'ուզուի:

ՏՕՆԱԿԱՆՔ ԵՒ ԲԵՄԱԿԱՆՔ

✱ 30 Օգոստոս կիր. — Վերափոխումն Ս. Աստուածամոր. կանխող երկու շաբաթներու ընթաց-  
քին, ամէն օր, Միաբանութիւն եւ աշակերտու-  
թիւն, Գեթեմանիի ձորը իջան, մասնակցելու  
Աստուածամոր գերեզմանին վրայ մատուցուող  
ամենօրեայ Ս. Պատարագներուն: Միշտ ալ ներ-  
կայ եղան բազմութիւն մը ջերմեռանդ հաւա-  
տացեալներու:

Երէկ երեկոյն, ամբողջ Միաբանութիւնը եւ  
աշակերտութիւնը (օգափոխութեամբ Պարոն-Տէր  
գացած ժառանգաւորներուն մէկ մասը իրենց  
Փոխ-Տեսուչ Հոգ. Տ. Թորգոմ Արեղայի հետ  
առաւօտուն վերադարձած էր վանք) Գեթեմանիի  
ձորը իջաւ, ուր հանդիսաւոր մուտքով «Հրաշա-  
փառ»ը կատարուեցաւ զլիսաւորութեամբ Գեր.  
Տ. Արտաւազդ Արքեպս.ի, եւ մատուցուեցան  
կիրակնոց, Հսկումի, յաջորդ օրուան գիշերա-  
յին ժամերգութեան պաշտամունքները. տօթին  
հակառակ սրբալայրը կենդանի էր հաւատաց-  
եալներու ներկայութեամբ: Գիշերուան ժամը  
8.30ին, Միաբանութիւն եւ աշակերտութիւն  
վանք վերադարձան:

Այսօր առաւօտ, նոյն հանդիսաւորութեամբ  
ամբողջ Միաբանութիւնը իջաւ Ս. Աստուածածին  
եկեղեցին, ուր, Աստուածամոր գերեզմանին վը-  
րայ, «Հրաշափառ»ի հանդիսաւոր մուտքէն յետոյ,  
հանդիսապետ Գեր. Տ. Արտաւազդ Արքեպս.ը մա-  
տոյց սուրբ եւ անմահ պատարագը, եւ քարոզեց  
քնարան առնելով «Օրհնեալ ես դու ի կանայս»  
խօսքը Աւետարանին, Հաւաստեց թէ աշխարհ  
խօսքը Աւետարանին, Հաւաստեց թէ աշխարհ  
ինչ որ ունի իբրեւ սէր, գթութիւն, երջանկու-

թիւն, անմեղ կոյսի մը եւ օրհնուած մօր մը շնոր-  
հիւ է որ ունի: Տրտուութեամբ ծնելու առաջին  
անէծքը անո՛վ սրբուեցաւ մարդկութեան հակա-  
տէն, ու ծնունդը՝ ժպիտ, տառապանքը՝ երջան-  
կութիւն դարձաւ մարդկային կեանքին մէջ: Ս.  
կոյսը, այսպէսով, բրիտանական արտաքին  
աշխարհակալութեան ներքին զոպանակը հանդի-  
սացաւ:

✱ 31 Օգոստոս Բչ. — Մեռելոց. Ս. Պատարագը  
մատուցուեցաւ ի Ս. Փրկիչ. քարոզեց Գեր. Տ.  
Արտաւազդ Արքեպս. «Երանի օգաւորաց» քնա-  
րանով. ցոյց տուաւ թէ ինչպէ՞ս բրիտանական  
քարոզութեանէն յետոյ միայն, մահը, որ բնական  
իրողութիւն մը ըլլալով հանգեցած սարսափն էր  
աշխարհի որդիներուն, դարձաւ նոյնքան բնական  
երևոյթ, որուն մէջ այս անգամ աւելի կը գեղեց-  
կանան կարծես հողինքը Աստուծոյ որդիներուն:

Ս. Պատարագէն յետոյ մասնաւոր Հոգեհա-  
զրտեան արարողութիւն կատարուեցաւ հան-  
գուցեալ Գեր. Տ. Մկրտիչ Արքեպս. Աղաւունքի  
հոգւոյն, անոր մահուան տարեկիցին առթիւ, եւ  
այսպէս Աղգ. Գերեզմանատան մէջ նմանապէս հան-  
դիսաւոր Հոգեհանգստեան պաշտամունքը տեղի  
ունեցաւ ի հանդիստ հոգւոյ համայն ննջեցեալոց  
կեդրիս Հայոց:

✱ 13 Սեպտ. կիր. — Գիւս Գոսոյ Ս. Աստու-  
ածամոր. Ս. Պատարագը մատուցուեցաւ Աստուա-  
ծամօր Ս. Գերեզմանին վրայ, յետ հանդիսաւոր  
«Հրաշափառ»ով մուտքի: Պատարագեց հիւրա-  
բար Ս. Աթոռ եկած Անթիքիայի հոգեւոր հայ-  
րերէն Տ. Ղևոնդ Վրդ., որ եւ քարոզեց ըստ պատ-  
շաճի աւուր, մարդարէական այն գաղափարին  
վրայ ուր Ս. կոյսը կը նկատուի գերազանցողը Աս-  
տուծոյ զօրութիւնը ստացողներուն: Մատնանչեց  
թէ այդ գերազանցութիւնը մարմնական գեղեց-  
կութիւնը եւ ֆիզիքական առաւելութիւնները  
չեն, այլ Տիրամօր կոչումը մայրութեան դերին. եւ  
այդ մայրութեան պարտականութիւնը կ'ենթադրէ  
զաւակներու դաստիարակութիւն եւ տունի հսկո-  
ղութիւն, կառավարութիւն:

✱ 20 Սեպտ. կիր. — Ս. Պատարագը մատուց-  
ուեցաւ ի Ս. Յարութիւն. քարոզեց Տ. Յուսիկ  
Վրդ. «Վշտակից լի իբրեւ զբարւոյ զինուոր Գրի-  
տոսի...» քնարանով. ցոյց տուաւ թէ բրիտան-  
եային կեանքը նման է զինուորի կեանքին: Զին-  
ւորին պէս պիտի ունենայ հնազանդութիւն աստ-  
ուածային կամքին, հրամանին. ճկունութիւն՝  
կեանքի ռազմապաշտէն յաղթական զօրք գալու  
համար. ու զինուորին նման պարտքին տակն է  
Ըլլալու անձնազօր, զօրծունեայ:

✱ 21 Սեպտ. Բչ. — Ծնունդ Ս. Աստուածամոր.  
Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածա-  
ծին, յետ հանդիսաւոր «Հրաշափառ»ով մուտքի:  
Քարոզեց Տ. Հմայեակ Վրդ., ցոյց տալով Տիրա-  
մօր դերը մարդկային փրկագործութեան, ընտա-  
նեկան եւ ընկերային կեանքներուն մէջ, Աստուծոյ  
Բանին մայրը ըլլալու արժանիքը իր անձին վրայ  
ի յայտ բերած ըլլալով, Ս. կոյսով կ'ենը սրբա-  
գրեց դարերու իր դատակնիքը. եւ որպէսզի  
ներկայ դարու մայրութիւնը կարենայ քաղաքա-  
կրթութեան մէջ իր դերը ունենալ, մաղթեց որ



Ս. Կոյսը չզգալի տիպար մնալէ բոլոր մայրերուն:

※ 27 Սեպտ. Կիր. — Տօն վերացման Սրբոյ Խաչին, երէկ երեկոյ, Կիրակոսից ժամերգութենէն յետոյ հանդիսաւորապէս կատարուեցաւ նախատօնակը վերացման խաչի, ու Մայր Տաճարին մէջ թափօր կազմած, խաչափայտի մասունքը պարունակող ճաճանչաւոր խաչը «Նշանաւ յով փոխադրուեցաւ Ս. Գլխազրի մատուռէն զեպի Աւագ Խորանի սեղանը, Գիշերը, լուցուած բոլոր կանթեղներու լոյսերուն մէջ խորհրդաւոր միջնորդութիւնով մը աւելի սրտառուչ պահ մը ապրիլ տօնող Ս. Գաղթայ Տաճարին մէջ տեղի ունեցաւ Հսկումի արարողութիւնը:

Իսկ այսօր, ի Ս. Գաղթայ հանդիսաւորապէս Ս. Պատարագը մատոյց և քարոզեց Եպիսկոպոսի թեմին Առաջնորդական փոխանորդ Գեր. Տ. Մամբրէ Եպս. Սիրունեան:

※ 28 Սեպտ. Բշ. Մեռելոց. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Փրկիչ. քարոզեց Տ. Հմայեակ Վրդ. «Մահուամբ զմահ կոխեաց, և յարուսեալ ի բնով մեզ զկեանս պարզեցաւ» բնաբանով: Ներկայացուց մահուան և կեանքի երկու տարբեր երևոյթները իրեւ խորապէս մէկ իրողութիւն: քանի որ մահը սպառուած, բնաջնջում չէ այլ կերպով մը հաւաստումը կեանքին: Մահով, մահէն յետոյ հոգիի կեանքն է որ կը սկսի: Եւ այս երևոյթը խորունկ յայտնութիւնն է խաչի խորհուրդին:

#### Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

Ամեն. Ս. Պատարագը Հօր հիւանդութեան առթիւ հետեւեալ անձնաւորութիւնք այցելած են Պատրիարքարանս և տեսակցելով Սրբազան Հիւանդին հետ չուտափոյթ ապաքինում և կատարեալ առողջութիւն մաղթած են Նորին Ամենապատուութեան:

※ 2 Սեպտ. Դշ. — Երուսաղէմի Դպտոց Ս. Եպիսկոպոսին փոխանորդը:

※ 7 Սեպտ. Բշ. — Երուսաղէմի Նահանգային Կառավարիչ Վսեմ. Մր. Գիթ-Բօշ:

※ 15 Սեպտ. Դշ. — Երուսաղէմի Գունաց Պատրիարք Ամեն. Տ. Տիմոթէոս Արքեպս.:

※ 19 Սեպտ. Շր. — Երուսաղէմի Ասորոց Գեր. Տ. Ֆիլոքսենոս Եպիսկոպոսը, որ այս առթիւ Նորին Ամենապատուութեան յանձնեց Անտիօքի Ասորոց Ամեն. Ս. Պատրիարքին կողմէ ուղղուած սիրալիր գրութիւն մը:

※ 21 Սեպտ. Բշ. — Ֆրանչիսկեանց Գեր. Կիւսոսոր:

※ 30 Սեպտ. Դշ. — Անդր-Յորդանանի Յոյն Կաթողիկոս Ս. Արքեպիսկոպոսը, ընկերակցութեամբ տեղւոյս Յոյն Կաթողիկոս փոխանորդին:

※ 1 Սեպտ. Դշ. — Կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ առժամայ ղեւանապետ Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. և աւագ-թարգման Հոգ. Տ. Հրապղան Արեղայ, ներկայ գտնուեցան տեղւոյս Անկիլքան Սէն Ժօրժ Եկեղեցիին մէջ, Ն. Ա. Բ. Քենթի Դուքսին մահուան առթիւ կատարուած Հոգեհանգստեան արարողութեան:

※ 3 Սեպտ. Եշ. — Այսօր, երեկոյան ժամը 7ին Ս. Գաղթեանց Մայր Տաճարին մէջ Հսկում կատարուեցաւ, պատերազմի երրորդ տարեկիցին առթիւ:

※ 9 Սեպտ. Դշ. — Երուսաղէմի Պէճիքական Նոր Ընդհ. Հիւպատոս Ն. Վ. G. Delecoigne իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Պատրիարքարանս, և ընդունուեցաւ Պատրիարքական Փոխ. Գեր. Տ. Գէորգ Վարդապետի կողմէ:

※ 11 Հոկտ. Կիր. — Ի դիմաց Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր՝ Փոխանորդ Գեր. Տ. Գէորգ Վրդ. և Աւագ-թարգման Հոգ. Տ. Հրապղան Արեղայ, Բամազան Պայրամի առթիւ շնորհաւորական այցելութիւն տուին քաղաքիս իսլամական Բարձր Ժողովին, և աւագանիէն քաղաքապետ Մսթաֆա Պէյ Էլ-Խալտիին, Օգնական Չիֆ-Սէքրէթարի Բուշի Պէյ Ապտէլհատին, Խամայի Պէյ Հիւսէյինին և Բաղդադ Պէյ Նէշաշիպիին:

#### ԳԵՐ. Տ. ՄԱՄԲՐԷՆ ՍՐԲԱՋԱՆ ՄԵՐ ՄԷՋ

25 Սեպտեմբեր Ուրբաթ օրը, Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր մասնաւոր հրաւերով Ս. Աթոռ ժամանեց Գեր. Տ. Մամբրէ Եպս. Սիրունեանը, մատուցանելու համար վերացման խաչի Պատարագը, և նախագահելու օրուան հանդիսութեանց: Նորին Սրբազնութիւնը Լիւտի կայարանէն դիմաւորուեցաւ Տնօրէն Ժողովի անդամ Հոգ. Տ. Հայրիկ Վրդի և Աւագ-թարգման Հոգ. Տ. Հրապղան Արեղայի կողմէ: — Ս. Հայրը բարձրօրէն կատարեց իր այդ պարտականութիւնը և խաչիւրացի Կիրակին պատարագեց ու քարոզեց բնաբան առնելով Առաքեալին խօսքը. «Հրեայք Նշան հայցեն, և հեթանոսք իմաստութիւն խնդրեն, իսկ մեք քարոզեսցուք զխաչելեան Քրիստոս հրէից զայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն»: Յոյց տուաւ թէ պատմութեան մէջ պակաս չեն եղած թերահաւատներ, հրէամիտք իստոնեաներ, որոնք մինչև այսօր յոյն հրաշքները կը սպասեն երկինքէն, հաւատալու համար Աստուծոյ Որդւոյն Աւետարանին: Հայ ժողովուրդը սակայն միշտ ալ հաւատացող մնացեր է խաչին գորութեան: Անոր պատմական կեանքը և իր գոյութիւնն իսկ ապացոյցն են այս իրողութեան:

Յետ Ս. Պատարագի, մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Ս. Աթոռոյս հանգուցեալ պատրիարքներուն և ինչպէս տարիներու սովորութիւնն է՝ Մեկգոնեան երկու հարազատ եղբայրներու հոգիներուն ի հանդիստ:

Նոյն երեկոյին, Գեր. Տ. Մամբրէ Եպս. Սիրունեանի նախագահութեամբ, կատարուեցաւ խաչվերացի անդատանը, — Շաբաթ մը մեզի հետ ըլլալէն վերջ Սրբազան հիւրը մեկնեցաւ Սիւրիա, Գիւտ խաչին ևս գալու և հանդիսութեանց նախագահելու խոստումով: — Մեր խորին շնորհակալութիւններն իր ըրածին, և քաղցր ըստաւումը իր վերադարձին համար:



## ԼԷՍԱՊԹԸ՝ ՊԱԼԱՏ

2 Սեպտեմբեր, 1942

Սիրելի եւ Ամենապատիւ Տէր,

Հրահանգ ստացած եմ Նոցին Վեհափառութեանց կողմէ հաղորդելու Ձերդ Ամենապատեմութեան այն խորապէս անկեղծ երախտագիտութիւնը որով Նոցին Վեհափառութիւնք ստացած են Ձեր ցաւակցութեան ազնիւ հետազոյրը:

Կը փութամ աւելցնել իմ անձնական խնդակցութիւններս Ձեր այսպիսի հետազոյր մը առաւման համար: Սոյն կերպով աւելի կը գործնան համակրութեան կապերը, որոնք ժամանակի ընթացքին յառաջ պիտի բերեն բարի կամեցողութեան աւելի մեծ ծաւալ մը ամբողջ աշխարհի մէջ:

Ձերդ հաւատարմօրէն,  
Ռոֆերտ Բ. Ն. Ռոֆերտ

## Վ Ե Ր Ա Դ Ա Ր Զ

ՆՈՐԻՆ ԱՄԵՆ. ՄԵՍՐՈՊ Ս. ՊԱՏՐԻԱՐԺ ԶՕՐ

28 Օգոստոս, Ուրբաթ երեկոյին, ժամը 8ին, կառավարական հիւանդակառքով Պէյրութի Ամերիկեան հիւանդանոցէն Ս. Աթոռ վերադարձաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը: Նորին Ամենապատեմութեան կ'ընկերանային Գեր. Տ. Արտաւազդ Արքեպս. Սիւրմէլեան, բժշկապետ Տօթք. Յովսէփ Ա. Եէնի-Դամէան, Անթիլիասի Աթոռին կողմէ Հոգ. Տ. Ղեւոնդ Վրդ. Զէպէեան եւ մեր Միաբաններէն Անթիլիասի Ժառանգաւորաց Տեսուչ Հոգ. Տ. Շնորհք Վրդ. Գալուստեան:

Աւելի քան խոր ու անկեղծ է մեր շնորհակալութիւնները նախ Ամերիկեան Հիւանդանոցի անձնուէր ու պատուական բժիշկներուն եւ բոլոր սպասարկողներուն, որոնք մէկուկէս ամիս շարունակ գուրգուրանքով եւ հոգածութեամբ չըրջապատեցին Սրբազան Հիւանդը, եւ բարեկաւուած մեզի վերադարձուցին զայն: Սակայն կը մասնաւորենք մեր խոր եւ անկեղծ երախտագիտութիւնը բժշկապետ Տօթք. Եէնի-Դամէանին՝ առաջին օրէն Սրբազան Հիւանդին նկատմամբ ունեցած իր ազնիւ ու բարձր զգացումներուն համար: Հակառակ իր զբաղումներուն յարգելի Տօթքօրը ուղեկիցը եղաւ Սրբազան Հօր վերադարձին իր ազնւաւորալ Տիկնոջը հետ միասին: Ընդ շարքի մը հսկեց Հիւանդին անհրաժեշտ պէտքերուն, եւ իր իմաստուն թեւալորանքները ընելէ վերջ Սրբազանը խնամող բժիշկներուն՝ մեկնեցաւ:

Խոր շնորհակալութիւն եւ յարգանք նոյնպէս Գեր. Տ. Արտաւազդ Արքեպս. Սիւրմէլեանին, իր եղբայրացական ազնիւ զգացումին եւ վերաբերմունքին համար հանդէպ Սրբազան Պատրիարք Հօր եւ Ս. Աթոռոյ Միաբանութեան: Դժբախտաբար Գեր. Տ. Արտաւազդ Սրբազանին զբաղումները թոյլատու չեղան որ աւելի երկար ունենայինք զինքը մեր մէջ: Վերափոխման Պատարագէն երկու օր յետոյ, Պէյրութ վերադարձաւ՝ ի զուրկ իր բազմաթիւ ու բազմակերպ զբաղումներուն որոնց նուիրուած է եւ զորս այնքան ձեռնահասօրէն կը զեկաւարէ. մեր խոր շնորհակա-

լութիւնները իրեն: Շնորհակալութեան լայն բաժին մը նաեւ կ'իլիկիոյ Անթիլիասի Աթոռին Տեղապահ Գեր. Տ. Եղիշէ Արքեպսկ. Կարօեանին եւ Միաբանութեան, Ս. Հիւանդին նկատմամբ իրենց ունեցած սիրոյն եւ յարգանքին համար. Հոգ. Տ. Ղեւոնդ Վրդ. Զէպէեանին Ս. Պատրիարք Հօր ուղեկցիլը զոյգն մէկ արտայայտութիւնն էր այն սիրոյն եւ յարգանքին զոր Անթիլիասի Միաբանութիւնը միշտ ունեցած է Սրբազան Պատրիարքին եւ Միաբանութեան նկատմամբ:

Երբ կը վերջացնենք հոս շարքը մեր շնորհակալութեանց խոր անոնց որոնք իրենց ազգային եւ մարդկային պարտականութեանը մէջ եղան՝ այս Հաստատութեան եւ անոր Պետին նկատմամբ, չենք կրնար չյայտնել մեր բոլորին խոր երախտագիտութիւնը Աստուծոյ որուն շնորհիւ ուրախ ենք յայտնելու որ Նորին Ամենապատեմութիւնը իր հարուածէն բուժուելու ապահով վիճակի մէջ է. բոլորովին յստակ է իր խօսքը, կը շարժին իր կաթնածանհար ձեռքն ու ոտքը, մօտ օրէն եթէ Տէրը կամենայ պիտի կրնայ այլեւս առանց ուրիշներու օժանդակութեան շրջիլ:

## Ո Ի Բ Ա Ր Ա Կ Ի Բ Ն Ե Ր

Ժառ. Վարժարանի այս տարուան չըջանաւարտներէն չորսը Լեւոն Աթուհեան, Յակոբ Սարգիսեան, Օննիկ Թաղէսեան, եւ Հայկ Մելգոնեան՝ ըրին իրենց կուսակրօնութեան եւ Ս. Աթոռոյ ծառայութեան ուխտը, եւ Ս. Պատրիարք Հօր մէջ ընդունեցին ուրար կրեւել շնորհը Հոկտեմբեր 5ին: Միաբանութեան շարքին այս չորս խոստմնալից ուժերու առիթով մեր զգացուած ուրախութիւնը անխառն է: Եթէ Տէրը կամենայ մօտ ժամանակէն Սրբազան Պատրիարք Հօր ձեռքէն պիտի ընդունին անոնք Յիսուսի քաղցր լուծը՝ Սարկաւազութեան աստիճանը եւ, այժմ միայն ուրարի ժապաւէնով խորհրդակրուած:

Տիրացու Լեւոն Աթուհեան, ծնած է ի Նիկոսիա 1922ին: Նախակրթութիւնը ստացած է տեղւոյն Մելիքեան վարժարանին մէջ: 1937ին ընդունուած է Ժառ. Վարժարան, որուն ընթացքը աւարտած է փայլուն յաջողութեամբ:

Տիրացու Օննիկ Թաղէսեան, ծնած է Գահիբէ 1921ին: Նախակրթութիւնը ստացած է տեղւոյն Գալուստեան Ազգ. Վարժարանին մէջ: 1938ին ընդունուած է Ժառ. Վարժարան, որուն ընթացքը աւարտած է յաջողութեամբ:

Տիրացու Հայկ Մելգոնեան, ծնած է ի Դերբէ խան 1923ին: Նախակրթութիւնը ստացած է տեղւոյն Ազգ. Վարժարանին մէջ: 1937ին ընդունուած է Ժառ. Վարժարան, որուն ընթացքը աւարտած է յաջողութեամբ:

Տիրացու Յակոբ Սարգիսեան, ծնած է Պէյրութ 1923ին: Նախակրթութիւնը ստացած է տեղւոյն Նոր Մարաշ Թաղի վարժարանին մէջ: 1937ին ընդունուած է Ժառ. Վարժարան, որուն ընթացքը աւարտած է յաջողութեամբ:



## ՕՐ. ԷՍԻ ԱՐԳԱՐԵԱՆ

1863 - 1942

Յաւով կ'իմանանք՝ Տ. Գարեգին Աւագ քննչ. կիրակոսեանի խմբագրութեանս ուղղուած նամակէն, մահը Օր. էմի Արգարեանի, որ տեղի ունեցած է ի կալկաթա, Օգոստոս 22ին: Հանգուցեալը շառաւիղներէն էր անուանի ու բարեգործ մեծ տան մը, որ Արգարեան Առետրական Տունն ու Շոգենաւային Ընկերութիւնն է եղած: Զարգացած այս հայունին, ուսած Անգլիա եւ Գերմանիա, կը նուիրուի ազգային մշակութիւնը գործին մասնաւորաբար հետաքրքրուելով հայ կրօնական երաժշտութեամբ: Հրատարակած է. —

1. Եղածայնութիւն Լայպստեմայնց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ — Պատարագմատոյց — զոր օրինակ երգի բոս կարգի, ի ժամանակի Մեծի Պառոյց եւ յաւուր Տօնից: Ա. Բ. և Գ. հատոր: Էջք XLIX + 1605:

2. Երգարանութիւն մնացալոյցի նմանեան եւ Չափի եւ Կարգի Ջուր օրհնելոյ նմանեան: Էջք՝ 148:

3. Չայնագրութիւն իննգ ժամերգութեանց Աւագ Շաքարու, համաձայն կանոնաց Առաքելական Ս. Եկեղեցւոյ Լայոց — Նաղկապարդ Կլարակէ, երկնայի երոգը, վեցերորդ եւ յաւուրեան ժամաց Աւագ Հինգշաբթու, եւս եւ յաւուրեան ժամու Աւագ Ուրբաթու: Էջք VIII + 341:

Գնահատութեան եւ օրհնութեան կոնդակի արժանած են իր գործերը օրուան Վեհափառ Տ. Տ. Գեորգ Ե. Կաթողիկոսէն: Իր մասին հիացմունքով կ'արտայայտուի Նոյնպէս հոգեւոր Տ. Թորգոմ Ա. Պատրիարքը:

Հանգուցեալի վաստակը գնահատած է նաեւ գերմանացի մեծանուն գիտնական, մասնագէտ միջնադարեան երաժշտութեան եւ տնօրէն Բերլինի պետական մատենադարանի՝ Դր. Էօհանէս Վալթ, որ 1935ին Երուսաղէմ եղած ժամանակ փախաբան էր նաեւ գաղափար կազմել մեր ազգային-եկեղեցական երաժշտութեան մասին: Մեր մէջ գոյութիւն ունեցող դանազան պատարագներու ձեռնարկներն ուսուցիչութեան առարկայ դարձնելէ յետոյ՝ հանգուցեալի Պատարագն արուեստի եւ հնագիտական տեսակէտով շատ աւելի հարազատ էր զտեր իրիւ հայկական գրող կրող, եւ համեմատաբար աւելի զերծ օտարախառն ազդեցութիւններէ:

Սիւն իր վշտակցութիւնը կը յայտնէ ազգանուէր հայունին մահուան համար, այն մխիթարութեամբ որ «Արգարի մահը նման է զեղեցիկ օրուայ վախճանին»:

Հանգիստ յաւիտեանակն իր հոգեւոյն:

## 4. ԲԱՍՄԱՃԵԱՆ

Վերջերս ֆրանսայի մէջ մեռած է յայտնի բանասէր եւ պատմաբան Կ. Բասմաճեան: Նրան է կենսարիւ, բայց փոքր տարիքէն զացած է Պոլիս, ուր նախնական ու բարձրագոյն դաստիարակութիւնը ստանալէ յետոյ աւարտած է զեղազործական վարժարանի դասընթացը եւ ժամանակ մըն ալ պարապած զեղագործութեամբ: Յիշարդերուն անցած փարիզ. Սահմանադրութեան քանի մը տարուան համար եկած Պոլիս, յետոյ նորէն վերադարձած փարիզ ուր մնացած էր մինչեւ իր մահը. — Բասմաճեան տարիներով հրատարակած էր Բանասէր հանդէսը: Ունի հրատարակութիւններ, ինչ՝ հայերէն եւ ինչ՝ ֆրանսերէն լեզուներով: Անի Ալլոմը եւ Զուարթնոցի ձաւարակեցական Ոնր, Հայ Արալեզներու եւ Բարեխոսական Մարտկնեւութեան Բաղդաստիւնը, Հիփիքներու Լեզուն, Հայ Իրաւարանութիւնը, Ն. Լամբրոնցիի Գաղափարն եւ Զինուորական Օրէնքներ, Հայ Նորագոյն Պատմութիւնը, Խսկական Պատմութիւնը Լայոց, Հայոց Հին Գեղարուեստի Վարդերներ, Լեւոն Ե. Լուսինեան, Գրամագիտութիւն եւ: Բասմաճեան հետաքրքրուած է նաեւ բնագիտական արձանագրութիւններով. իր շաղկապութեան առարկայ եղած են մասնաւորաբար վանի, Մանազկերտի արձանագրութիւնները:

Սիւն խոր ցաւով կ'արձանագրէ մահը այս հմուտ բանասէր պատմաբանին, որուն թողած բացը այս ապերախ օրերուն մանաւանդ զգալի կը մնայ:

Հանգիստ իր հոգիին:

## ՏՕՔԲ. Վ. ԹՈՐԳՈՍԵԱՆ

Փարիզում խոր ձերութեան մէջ կը շիջի բժիշկ բանասէր եւ հանրային երկարամեայ գործիչ Տօքթ. Վ. Թորգոմեան: Նրան էր 1858ին Սկիւտարի վկայուած փարիզի բժշկական վարժարանէն: Եղած է Պոլսոյ մէջ՝ զեր նախագահ կայսերական բժշկական ընկերութեան, եւ փարիզի բժշկապատմական ընկերութեան: Ունի «Ուսուցիչութեան ֆրանսերէն հայ բժշկական ձեռագրերը», աշխատակցած է բանասիրական հանդէսներու, եւ հրատարակած է Պոլսոյ հին գերեզմանաքարերու արձանագրութիւնները: Խառնուածքով մեղմ ու քաղցր, բարութեան տիպարն եղաւ եւ բարեխոսութեամբ նուիրուեցաւ ազգային կեանքի մեծ ու փոքր գործերու:

Տխար մարդ եւ ազգասէր մտաւորականի մը յիշատակովը կը հեռանայ մեղմէ Տօքթ. Վ. Թորգոմեանը:

Յարգանք իր յիշատակին: